



2020

ՏԱՐԵԳԻՐ

ANNUAL REPORT

**Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժման
հիմնարար սկզբունքները**

**Fundamental Principles of the International Red Cross and
Red Crescent Movement**

ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

HUMANITY

ԱՆԿՈՂՄՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

IMPARTIALITY

ՉԵՉՈՔՈՒԹՅՈՒՆ

NEUTRALITY

ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ

INDEPENDENCE

ԿԱՄԱԿՈՐՈՒԹՅՈՒՆ

VOLUNTARY SERVICE

ԵԶԱԿԻՈՒԹՅՈՒՆ

UNITY

ՀԱՄԸՆԴՅԱՆՐՈՒԹՅՈՒՆ

UNIVERSALITY

ՏԱՐԵԳԻՐ 2020

**ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ARMENIAN RED CROSS SOCIETY**





2020 թվականին լրացավ Հայկական Կարմիր խաչի ընկերության հիմնադրման 100 տարին: Ստեղծվելով ուղիղ 100 տարի առաջ՝ մեր ժողովրդի առաջ ծառայած մարդասիրական մարտահրավերներին արձագանքելու համար, ՀԿԽԸ-ն, անցել է զարգացման երկար ճանապարհ՝ դառնալով երկրում գործող հզոր և վստահելի մարդասիրական կազմակերպություն:

Այդ ուղին լի է եղել մարտահրավերներով, ձեռքբերումներով ու դժվարություններով: Մեր տարածաշրջանը շարունակում է մնալ անհանգիստ և լարված, որտեղ տարբեր ճգնաժամերի հետևանքով խոցելի խմբերի մարդասիրական կարիքներն ավելի ու ավելի են խորանում: Այս իրավիճակում մարդասիրական կազմակերպության դերն ու նշանակությունն էլ ավելի է կարևորվում: Հայկական Կարմիր խաչի ընկերությունն իրականացրել է իր առաքելությունը հենց այդ պատասխանատվության գիտակցությամբ:

ՀԿԽԸ-ն ուղեկցել է Հայաստանի բնակչությանը վերջին մեկ դարում՝ լինելով ժողովրդի կողքին պատմական բոլոր զարգացումների ժամանակ, լինի դա անկախ հանրապետության անկում, թե՛ հորհրդային Միության փլուզում, համաճարակ, թե՛ պատերազմ, խոշոր աղետ, թե՛ սոցիալական ցնցում: Հանդիսանալով Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժման լիիրավ անդամ, Հայկական Կարմիր խաչի ընկերությունը մշտապես եղել է խոցելի բնակչության կողքին՝ փորձելով հնարավորինս թեթևացնել նրանց հոգսը:

Այս տարիների ընթացքում էլ, ըստ մարտահրավերների ու կարիքի, ձևավորվել են այն ռազմավարական ուղղությունները, որոնցով գործում ենք նաև այսօր՝ օրեցօր զարգացնելով մեր կարողությունները:

Անցյալ տարի ամբողջ աշխարհի հետ միասին բախվեցինք Քովիդ-19 համավարակի, ապա՝ Ղարաբաղյան հակամարտության սրացման հետևանքներին: Այս երկու աղետները՝ տարբեր իրենց բնույթով ու հետևանքներով, լուրջ փորձություն

2020 marked the 100th anniversary of the Armenian Red Cross Society. Having been founded exactly 100 years ago to respond to the humanitarian challenges facing our people, the ARCS has come a long way becoming a powerful and trustworthy humanitarian organization operating in the country.

That path has been full of challenges, achievements and difficulties. Our region remains troubled and tense, whereas the humanitarian needs of vulnerable groups as a result of various crises are deepening. In this situation the role and significance of a humanitarian organization is even more emphasized. The Armenian Red Cross Society carried out its mission with the awareness of that very responsibility.

The ARCS has accompanied the population of Armenia throughout the past century standing by the the people during all historical developments, be it the fall of the independent republic, the collapse of the Soviet union, a pandemic or a war, a major disaster or a social upheaval. As a full member of the Red Cross and Red Crescent International Movement, the Armenian Red Cross Society has always stood by the vulnerable population, trying to help them through their problems much as possible.

During these years, according to the challenges and needs the strategic directions have been shaped with which we operate presently developing our capabilities day after day.

Last year together with the rest of the world, we faced the Covid-19 pandemic, then the consequences of the escalation of Nagorno Karabakh conflict. These two disasters different with their nature and consequences, were a serious ordeal for both our country and the National Society, at the same time forcing to mobilize all the human potential - staff and volunteers, and make efforts to mobilize resources on a large scale.

The Armenian Red Cross Society worked in an emergency mode throughout the year, providing a variety of assistance to people affected by the Covid-19 pandemic and displaced by the escalation of the Karabakh conflict.

We were part of the response system set up under the RA

հանդիսացան և մեր երկրի, և Ազգային ընկերության համար, միևնույն ժամանակ պարտադրելով մոբիլիզացնել ամբողջ մարդկային ներուժը՝ անձնակազմի և կամավորների, և ջանքեր գործադրելու ռեսուրսների լայնածավալ մոբիլիզացման համար:

Հայկական Կարմիր խաչի ընկերությունն ամբողջ տարին աշխատեց արտակարգ ռեժիմով՝ բազմաբնույթ աջակցություն տրամադրելով Քովիդ-19 համավարակից տուժած և Ղարաբաղյան հակամարտության սրացման հետևանքով տեղահանված անձնանց:

Մենք մաս կազմեցինք ՀՀ փոխվարչապետի ներքո ստեղծված արձագանքման համակարգի՝ լիարժեք իրականացնելով մեր աջակցող դերը կառավարությանը և տրամադրելով Քովիդ-19 համավարակի ընթացքում հանրապետությունում բաշխված մարդասիրական աջակցության 83 տոկոսը:

ՀԿԽԸ շահառուների թիվն ավելացավ ևս 120 000-ով, իսկ տրամադրված աջակցությունը ներառեց մարդասիրական օգնություն՝ սնունդ, հիգիենիկ և առաջին անհրաժեշտության պարագաներ, բժշկական պարագաներ հիվանդանոցների և հենաշարժողական ինտերներ ունեցողների համար, առաջին օգնության դասընթացներ և պայուսակներ, հոգեբանական աջակցություն, տնտեսական ինքնաբավության խթանում և իրազեկվածության բարձրացում:

Կամավորների աննախադեպ մոբիլիզացիայի և ներգրավվածության շնորհիվ «Հայ կամավորների բանկ» ԵՀԿ-ի կողմից կազմակերպված «Տարվա լավագույն կամավոր 2020» մրցանակաբաշխության ժամանակ արժանացել ենք «Տարվա լավագույն կամավորական նախաձեռնություն» մրցանակին: Տարվա ընթացքում ստացել մի քանի տասնյակ շնորհակալագրեր՝ Կառավարությունից, համայնքապետարաններից, կազմակերպություններից և անհատներից:

Մեր գործընկերների վստահությունն ու շահառուների երախտագիտությունը մեզ օգնում է առաջ շարժվել՝ ներգրավելով նոր ռեսուրսներ և իրականացնելով նոր ծրագրեր՝ առավել խոցելի խմբերի մարդասիրական կարիքներին բազմակողմանի արձագանք ապահովելու համար:

Մենք շնորհակալություն ենք հայտնում մեր մշտական և նոր գործընկերներին, փորձառու և սկսնակ կամավորներին, մեր ողջ անձնակազմին՝ ՀԿԽԸ մարդասիրական առաքելության իրականացմանն աջակցելու համար:

Համոզված եմ, որ ևս 100 տարի անց Հայկական Կարմիր խաչի ընկերության գործունեությունն ամփոփելիս՝ եկող սերունդները նվիրված և հետևողական աշխատանքի նորանոր էջեր գրելու հնարավորություն կունենան:

Deputy Prime Minister, fully fulfilling our supporting role to the government and providing 83% of the humanitarian aid distributed in the country during the Covid-19 pandemic.

The number of ARCS beneficiaries grew by another 120,000, and the assistance provided, included humanitarian assistance: food, hygiene and basic necessity items, medical supplies for hospitals and people with mobility problems, first aid courses and kits, psychological support, economic self-sufficiency promotion and awareness raising.

With the large-scale humanitarian activities of the ARCS, the circle of our partners was enlarged: local businesses and international organizations were involved, the cooperation with the RA government and local self-governance bodies gained a new momentum deepening and expanding the joint efforts even more.

Due to the unprecedented mobilization and involvement of volunteers, we were awarded the "Best Volunteer Initiative of the Year" award at the "Best Volunteer of the Year 2020" award ceremony organized by the "Armenian Volunteer Bank" ECO. During the year he received several dozen letters of thanks from the Government, municipalities, organizations and individuals.

Due to the unprecedented mobilization and involvement of volunteers, we won the "Best Volunteer Initiative of the Year" award at the "Best Volunteer of the Year 2020" ceremony organized by the "Armenian Volunteer Bank" YNGO. During the year we received several dozens of thank you letters from the government, municipalities, organizations and individuals. from the Government, municipalities, organizations and individuals.

The trust of our partners and the gratitude of the beneficiaries help us move forward by attracting new resources and implementing new programs in order to provide comprehensive response to the humanitarian needs of the most vulnerable groups.

We thank our permanent and new partners, our experienced and fresh volunteers and our staff for their support to the ARCS humanitarian mission.

I am convinced that 100 years from now, while summarizing the activities of the Armenian Red Cross Society the future generations will have the opportunity to write new pages of commitment and consistence.

**Նախագահ
Մխիթար Մնացականյան**

**President
Mkhitar Mnatsakanyan**

**Գլխավոր քարտուղար
Աննա Եղիազարյան**

**Secretary General
Anna Yeghiazaryan**

ՏԱՐԵՎԻՐ 2020

**ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ARMENIAN RED CROSS SOCIETY**



Հայկական Կարմիր խաչի ընկերությունը, ըստ իր 2011-2020 թթ. ռազմավարության, առաջնորդվում է հետևյալ արժեքներով.

Մարդիկ

Մենք զարգացնում ենք մարդկանց և համայնքների կարողությունները՝ գործելու հանդուրժող միջավայրում և գտնելու կայուն լուծումներ իրենց ամենամանրամասնացված և խոցելի կարիքները հոգալու համար:

Ազնվություն

Մենք աշխատում ենք համաձայն մեր հիմնարար սկզբունքների՝ թափանցիկ և պատասխանատու կերպով:

Համագործակցություն

Որպես Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժման անդամ՝ մենք համագործակցում ենք կառավարության, ինչպես նաև այլ տեղական և միջազգային կազմակերպությունների հետ, հարգելով մեր խորհրդանիշները և ներկայացված անկախությունը, անկողմնակալությունը և չեզոքությունը:

Բազմազանություն

Մենք հարգում ենք համայնքների և մեր կամավորների, անդամների և աշխատակիցների բազմազանությունը՝ հիմնվելով անխտրականության և մեր անկողմնակալության և համընդհանրության սկզբունքների վրա:

Առաջնորդություն

Մենք ցուցաբերում ենք առաջնորդություն և մեր աշխատանքում ձգտում ենք գերազանցության՝ ուշադրություն դարձնելով համայնքների և դրանց իրավունքներին, կարիքներին և խոցելիությանը:

Նորարարություն

Մենք ներշնչվում ենք մեր ժառանգած պատմությունից և ավանդույթից, սակայն միաժամանակ փորձում ենք գտնել ստեղծագործական, կայուն լուծումներ խնդիրներին, որոնք վտանգում են փոփոխվող աշխարհում ապրող մարդկանց բարեկեցությունը և արժանապատվությունը:

Մենք աշխատում ենք հետևյալ ռազմավարական ուղղություններով.

Բնակչության տեղաշարժ

Որոնում ծառայություն

Առաջին օգնություն

Սոցիալ-առողջապահություն

Մարդասիրական արժեքների տարածում

Միջազգային համագործակցություն

Երիտասարդական, կամավորություն և անդամակցություն

Կազմակերպության զարգացում

Ռեսուրսների մոբիլիզացում



Աղետների կառավարման (ԱԿ) ուղղության հիմնական նպատակն է նվազեցնել ազգաբնակչության խոցելիությունը և բարձրացնել դիմակայունությունը բնական ու տեխնածին աղետների նկատմամբ՝ համայնքային մակարդակում աղետների ռիսկի նվազեցման միջոցով և հզորացնել Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) աղետների նախապատրաստման և արձագանքման (ԱՆԱ) համակարգը:

Պատրաստ լինել արձագանքելուն. արդիականացված պատրաստվածություն և արձագանքման կարողություններ Հարավային Կովկասում

Եվրասիան ձևավորվող մարդասիրական օգնության և քաղաքացիական պաշտպանության վարչության ֆինանսավորմամբ և Դանիական, Ավստրիական ու Իսլանդական Կարմիր խաչերի համաֆինանսավորմամբ իրականացվող ծրագիրը մեկնարկել է 2019թ-ի հունվարին՝ նպատակ ունենալով նպաստել Հայաստանի բնակչության պաշտպանության համակարգերի պատրաստվածության մակարդակի

բարձրացմանը, բնակչության պաշտպանության և հումանիտար օգնության դերակատարների միջև համագործակցությունն ընդլայնելու միջոցով: Ծրագրի հիմնական թիրախ հանդիսանում են ՀԿԽԸ Երևանի, Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերի արձագանքման թիմերը, ինչպես նաև բնակչության պաշտպանության ոլորտում համագործակցող կառույցները:

2020 թվականին ծրագրի շրջանակներում թարգմանվել և մշակվել են սոցիալ-հոգեբանական մի շարք նյութեր, որոնցից են «Հոգեբանական առաջին օգնության ուղեցույցը», «Հիմնական Հոգեբանական առաջին օգնություն. Մոդուլ 2», «Հոգեբանական առաջին օգնություն երեխաներին. Մոդուլ 3», «ՀԱՕ խմբերում՝ աջակցություն թիմերին. Մոդուլ 4» ձեռնարկները, «Կամավորներն արտակարգ իրավիճակներում. սթրեսի կառավարման և ինքնօգնության գործնական խորհուրդներ» և «Երեխաների սթրեսային հակազդումները և նրանց տրամադրվող հոգեբանական աջակցության առանձնահատկությունները» բրոշյուրները:

2020 թվականին կրագ արձագանքման թիմերի



ՀՀ-ում Ճապոնիայի Արտակարգ և լիազոր դեսպան Ն.Գ. պրն. Ջուն Յամադան և ՀԿԽԸ նախագահ Միխիթար Մնացականյանը ստորագրեցին «Փոխենք մտածելակերպը, մաքրենք քաղաքը» ծրագիրը

համար իրականացվել են գիտելիքների թարմացման դասընթացներ «Աղետների ռիսկի նվազեցում», «Որոնողավորկարարական աշխատանքներ», «Առաջին օգնություն», «Կանխիկ դրամային աջակցություն» թեմաներով:

Ճապոնիայի կառավարությունն աջակցում է Իջևան քաղաքի աղբահանության համակարգի զարգացմանը

Հունվարի 26-ին, Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) կենտրոնական գրասենյակում ՀՀ-ում Ճապոնիայի Արտակարգ և լիազոր դեսպան Ն.Գ. պրն. Ջուն Յամադան և ՀԿԽԸ նախագահ Միխիթար Մնացականյանը ստորագրեցին «Փոխենք մտածելակերպը, մաքրենք քաղաքը» ծրագիրը, ըստ որի կբարելավվի Տավուշի մարզի Իջևան քաղաքի աղբահանության համակարգը: Ստորագրման արարողությանը ներկա էին նաև Իջևանի քաղաքապետը, ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և Տավուշի մարզպետարանի ներկայացուցիչներ:

Ճապոնիայի կառավարության աջակցությամբ՝ Հայկական Կարմիր խաչի ընկերությունը Իջևանում կտեղադրի 240 աղբաման և քաղաքապետարանին կտրամադրի համապատասխան աղբահավաք մեքենա: Իջևանի քաղաքապետարանը կապահովի աղբի հավաքման գործընթացի հետագա

տեխնիկական սպասարկումը:

Կամավոր կարողությունների միջոցով բնակչության պաշտպանության համակարգերի ամրապնդում

Եվրոպական միություն մարդասիրական օգնության և քաղաքացիական պաշտպանության վարչություն, Ավստրիական զարգացման համագործակցություն, Ավստրիական Կարմիր խաչի կողմից ֆինանսավորվող ծրագիրը մեկնարկել է 2020թ.-ի փետրվարին և շարունակվելու է մինչև 2022 թվականի հունվարը: Այն նպատակ ունի նպաստել Հայաստանի մարզերում կամավոր կարողությունների միջոցով բնակչության պաշտպանության համակարգերի ամրապնդմանը: Ծրագրի թիրախ խմբերն են հանդիսանում ՀՀ Կոտայքի մարզի Գառնի և ՀՀ Լոռու մարզի Մեծ Պառնի համայնքների և հարակից բնակավայրերի ազգաբնակչությունը: Ծրագրի առջև դրված խնդիրներն են՝

1. Բնակչության պաշտպանության համակարգերում կամավորների ինտեգրման փորձի և հաջողված պատմությունների վերաբերյալ հետազոտության իրականացում և մոդելների մշակում:
2. Հայաստանում բնակչության պաշտպանության կամավորական թիմերի ձևավորում և կարողությունների զարգացում:

3. Բնակչության պաշտպանության ոլորտում միջոլորտային համագործակցության զարգացում և համայնքներում համապատասխան ինքնաբավ համակարգերի ներդրում:
4. Բնակչության պաշտպանության կամավորների ընդգրկման և զարգացման արդյունքահեն մոդելի մշակում, որը հետագայում հնարավոր է կիրառել բնակչության պաշտպանության ոլորտում կամավորների զարգացման նպատակով:

Պատերազմի պայթուցիկ մնացորդների և ականների վտանգի իրազեկման ծրագիր Հայաստանի Հանրապետությունում

Ծրագիրը մեկնարկել է 2020 թվականի հունիսին և նպատակ ունի բարձրացնել Հայաստանի

վերապատրաստվելով որպես պայթուցիկ զինամթերքի վտանգի իրազեկողներ: Ազդակիր համայնքների դպրոցների աշակերտների շրջանում վտանգի վերաբերյալ իրազեկվածության բարձրացման նպատակով իրականացվել են հատուկ մեթոդաբանությամբ դասընթացներ, ՀԿԽԸ կամավորների օժանդակությամբ շարունակական տեղեկատվական դասընթացներ և բարոզարշավներ են իրականացնում աշակերտների տարբեր տարիքային խմբերի համար:

Ծրագրի շահառու կդառնա ավելի քան 35,000 մարդ, մասնավորապես.

- Հայկական Կարմիր խաչի ընկերության կամավորներ և հրահանգիչներ
- Համայնքի ղեկավարներ և համայնքապետարանի ներկայացուցիչներ



Հանրապետության հակամարտության արդյունքում տուժած համայնքների, մասնավորապես՝ Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց ձորի և Սյունիքի բնակչության իրազեկվածության մակարդակը պատերազմի պայթուցիկ մնացորդների և ականների վերաբերյալ՝ նպաստելով առավել անվտանգ վարքագծային դրսևորումների ձևավորմանը, ինչը կհանգեցնի պատերազմի պայթուցիկ մնացորդներով և ականներով պայմանավորված հետագա պատահարների նվազեցմանը:

Ծրագրի շրջանակներում ՀԿԽԸ կամավորներ-հրահանգիչներն անցել են կարողությունների զարգացման մասնագիտական դասընթացներ՝

- Թիրախ համայնքների դպրոցների ուսուցիչներ և աշակերտներ
 - Կանայք և երեխաներ
 - Գյուղական համայնքների ազգաբնակչություն:
- Ծրագիրն իրականացվում է Ականազերծման և ուտիլիզացիայի հիմնադրամի հետ համագործակցությամբ և ՆԱՏՕ-ի աջակցության և գնումների գործակալության ֆինանսավորմամբ:

Արձագանք Գյումրիում տեղի ունեցած կարկտահարության հետևանքների

2020 թվականի հուլիսի 13-ին Շիրակի մարզում տեղի ունեցած հորդառատ անձրևի և կարկուտի հետևանքով տուժել է Գյումրի համայնքը, որտեղ

ՏԱՐԵԿՆԵՐ 2020





ՀԿԽԸ կողմից իրականացվել է մարդասիրական օգնության տրամադրում աղետից առավել տուժած ընտանիքներին: Մարզային և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցությամբ՝ ճշգրտվել և հստակեցվել են առավել տուժած ընտանիքների ցուցակները: Տուժած առավել խոցելի 600 ընտանիքների կենսապայմանների վերականգնմանն ու ամրապնդմանն օժանդակելու նպատակով ՀԿԽԸ Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի ֆինանսավորմամբ դրամային օժանդակություն և անկողնային պարագաներ է տրամադրել 400 ընտանիքի, իսկ 200 ընտանիք ստացել է վառուչերներ հազուստի ձեռք բերման նպատակով:

Արձագանք Ղարաբաղյան հակամարտության սրացմանը

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը (ՀԿԽԸ) Ղարաբաղյան հակամարտության սրացման առաջին իսկ օրերից մարդասիրական օգնություն է տրամադրել անվտանգության նկատառումներով Հայաստան տեղափոխված անձանց:

Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժման գործընկերների և միջազգային ու տեղական կազմակերպությունների կողմից ավելի քան 2 մլրդ. 228 մլն. ՀՀ դրամ է տրամադրվել Հայկական Կարմիր խաչի ընկերությանը՝ մարդկանց ամենահրատապ ու անհետաձգելի կարիքներին արձագանքելու համար:

- Ավելի քան 110 000 մարդու մարդասիրական օգնություն (սնունդ, ոչ պարենային ապրանքներ)
- Աջակցություն 14 առողջապահական հաստատություններին՝ սայլակներ (140), քայլակներ, հենակներ, ձեռնափայտեր, հիգիենայի և անկողնային պարագաներ և բժշկական սարքավորումներ
- Բովիդ-19-ի տարածումը նվազեցնելու կանխարգելիչ միջոցառումներ՝ շուրջ 600 000 դիմակների և 150 000 ալկոհոլային բաշխում
- Աջակցություն ավելի քան 50 000 մարդու ձմեռմանը (տաքացուցիչներ, ձմեռային հագուստ, տաք ծածկոցներ)
- Բժշկական/ինամքի պարագաների և Առաջին օգնության հավաքածուների աջակցություն ավելի քան 10,000 մարդու
- Հիմնական կարիքների մատչելիության ապահովում. կոմունալ վճարներ ապաստարանների համար, որտեղ տեղավորվել են Լեռնային Ղարաբաղից տեղահանված մարդիկ (474 ապաստան, ավելի քան 11.500 մարդ, 363 մլն դրամ)
- Աջակցություն հյուրընկալող ընտանիքներին (շուրջ 12 544 մարդ, 376 մլն 330 հազար ՀՀ դրամ)
- ՀԿԽԸ թեժ գծերն ստացել են ավելի քան 19,000 զանգ
- Հոգեբանական և առաջին հոգեբանական աջակցություն է տրամադրվել ավելի քան 20,000 մարդու, ներառյալ վիրավոր զինծառայողները և նրանց հարազատները, հակամարտության ընթացքում սպանվածների մարմինների նույնականացման գործընթացում ներգրավված քաղաքացիները, պետական հաստատություններում և մասնավոր տներում պատասպարված մարդիկ, անհայտ կորածների և գերիներ և հարազատները:
- 1900 երեխա ներգրավվել է հատուկ մոդելով կազմակերպված հոգեբանական և կրթական ծրագրում
- ՀԿԽԸ հետ լնասվածքային վերականգնողական կենտրոնն իր ամբողջ ներուժն ու մասնագիտական կարողությունները ծառայեցնում է վիրավոր զինածառայողների բուժման, ֆիզիկական և հոգեբանական վերականգնման գործընթացին (104 բուժփող)
- Որոնում ծառայությունն արձագանքել է ավելի քան 3860 զանգի:



2020թ. աշխարհում և Հայաստանի Հանրապետությունում ճգնաժամային իրավիճակների հետևանքով առաջացած բնակչության հոսքերը և տեղաշարժը դառնում են մարդկանց իրավունքների ոչ լիարժեք կատարման, հատուկ կարիքներ ունեցող խմբերի խոցելիության աճի, սոցիալական և հոգեբանական ծանր իրավիճակների, բռնության և մարգինալացման պատճառ: ՀԿԽԸ-ն Բնակչության տեղաշարժի ուղղությամբ իրականացնում է ապաստան հայցողների, փախստականների, փախստականի նման կարգավիճակ ունեցող և տեղահանված անձանց պաշտպանությանն ու ինտեգրմանն ուղղված լայնածավալ ծրագրեր:

2020թ. ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գրասենյակի հետ սերտ համագործակցությամբ տեղահանված բնակչությանն աջակցելու նպատակով շարունակել ենք մեր գործունեությունը ապաստան հայցողների ընդունման պայմանների բարելավման, ընտանիքների ինքնաբավության և ինտեգրման ապահովման, սեռով և գենդերով պայմանավորված բռնության դեպքերի կանխարգելման և արձագանքման ուղղությամբ:

Մեծ ուշադրություն է դարձվել փախստականների շրջանում կորոնավիրուսի կանխարգելմանն ուղղված միջոցառումներին. իրազեկման և պաշտպանիչ միջոցների բաշխման, հոգեբանական աջակցության, սննդի և հիգիենիկ փաթեթների տրամադրման միջոցով նվազեցվել են վարակի և սոցիալ-հոգեբանական իրավիճակի վատթարացման ռիսկերը:

Ղարաբաղյան հակամարտության սրացման հետևանքով ՀՀ տեղափոխված անձանց համար ՀՀ կառավարության, մարզպետարանների և համայնքապետարանների հետ սերտ աջակցությամբ իրականացվել են սննդի, հիգիենիկ փաթեթների, անկողնային պարագաների, մահճակալների և այլ իրերի բաշխումներ՝ ՀՀ բոլոր մարզերում և Երևանում: Շուրջ 24 000 անձ ընդգրկվել է ՄԱԿ ՓԳՀ հետ համագործակցությամբ իրականացվող արձագանքման ծրագրում:

Բացի սոցիալական աջակցությունից, ծրագիրը ներառել է նաև հոգեբանական և երեխաների դիմակայունության բարձրացմանն ուղղված լայնածավալ միջոցառումներ՝ 2180 անձ ընդգրկված է եղել խմբային հոգեբանական աշխատանքներում,

156 անձ ստացել է հոգեբանական անհատական խորհրդատվություն, 1483 երեխա մասնակցել է դիմակայության բարձրացման ուղղված 75 խմբերի պարապմունքների:

Տնտեսական ինտեգրում

2020 թվականին ՀՀ-ում ապաստանած փախստական ընտանիքների համար Հայկական Կարմիր խաչի ընկերությունն իրականացրել է տնտեսական ինտեգրմանն ուղղված բազմաբնույթ ծրագրեր, որոնցից էր 50 ընտանիքների տնտեսական ինտեգրմանն ուղղված դեպքերի վարումը. տնտեսական ինտեգրման ծառայությունների քարտեզագրման և ընտանիքի ռեսուրսների գնահատման հիման վրա մշակվեցին անհատական միջամտության պլաններ, կատարվեցին համապատասխան ուղղորդումներ և

այցելություն, նշված պետական գերատեսչությունների աշխատակիցների վերապատրաստումներ:

Սահմանակետերում աշխատող համապատասխան անձնակազմի՝ ՀՀ ԱԱԾ սահմանապահ գործերի ներկայացուցիչների և ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության աշխատակիցների համար կազմակերպվել են մի շարք դասընթացներ առցանց ձևաչափով՝ պահպանելով Քովիդ -19-ի կանխարգելիչ նախապայմանները:

Ամեն շաբաթ մոնիտորինգային այցեր ենք իրականացրել նաև ՀՀ միգրացիոն ծառայության ապաստան հայցողների կացարանում, որտեղ անհատական խորհրդատվություններ ենք տրամադրել՝ իրավական, բժշկական,



բուլչինգ, 24 ընտանիքների տրամադրվեցին գործիքներ, սարքավորումներ կամ խոշոր եղջերավոր անասուններ:

Աշխատանք սահմանակետերում և ապաստան հայցողների կացարանում

2020 թ. Սյունիքի, Լոռու, Տավուշի և Շիրակի մարզերի մարզային մասնաճյուղերի միջոցով և ՀՀ ԱԱԾ ու ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության հետ սերտ համագործակցությամբ՝ սահմանակետերի, ինչպես նաև Չվարթնոց միջազգային և Գյումրու օդանավակայաններում պարբերաբար իրականացրել ենք սահմանի մոնիթորինգային 43

հոգեբանական, քննության վայրի, աշխատանքի, սոցիալական կարիքների և այլ թեմաներով:

Սեռով ու գենդերով պայմանավորված բռնությունների (ՍԳՊԲ) կանխարգելման նպատակով 1 դասընթաց ենք անցկացրել մտահոգության առարկա հանդիսացող անձանց համար:

Ստեղծել ենք նաև Կանանց փոխաջակցման խմբեր (14 հանդիպում, 231 մասնակից), որի շրջանակներում կայացող ամենամյա հանդիպումները օգնել են նվազեցնել կանանց մոտ տեղահանման հետևանքով առաջացած տրավմաների ազդեցությունը, կանխարգելել

հոգեբանական բազմաթիվ խնդիրներ և ընտանեկան կոնֆլիկտներ, կանանց հզորացման միջոցով, գիտելիք և տեղեկատվություն փոխանցելու միջոցով՝ նվազեցնել գեղեցիկ պայմանավորված բռնությունը:

Խորհրդատվությունների ընթացքում ՀԿԽԸ և այլ համագործակից կառույցների խնդրանքով ապահովվել է 960 ժամ բանավոր և 352 էջ գրավոր թարգմանություն՝ պարսկերեն, թուրքերեն, արաբերեն, ֆրանսերեն, ռուսերեն, անգլերեն, եզդիերեն, քրդերեն և այլ լեզուներով:

Համագործակցություն Զուվեյթի Կարմիր մահիկի հետ

2020 թվականին ՀԿԽԸ Զուվեյթի Կարմիր մահիկի հետ համագործակցությամբ իրականացվեց աջակցության նոր ծրագիր ի օգնություն Հայաստան տեղահանված սիրիահայերի: Երկու ընկերությունները ժնևում կնքեցին համագործակցության հուշագիր: Ծրագիրը ներառում էր սոցիալական և առողջապահական օգնություն և պաշտպանություն սիրիահայերին: Ծրագրի ընթացքում շուրջ 340 սիրիահայ խոցելի ընտանիքներ ստացան սննդի փաթեթներ: 340 ընտանիք ընդգրկվեց ձմեռային և աշնանային հագուստի համար վաուչերների տրամադրման գործընթացում: Բացի այդ, 28 սիրիացի ուսանողներ ներառվեցին կրթավճարների աջակցության ծրագրում: 34 անձի ՀԿԽԸ-ի ՀԲԸՄ հետ համատեղ ուղղորդմամբ աջակցեց բժշկական միջամտության ծախսերը վճարելու հարցում:

Սիրիահայերի և տեղացիների դիմակայունության բարձրացում

2018 թվականին մեկնարկել է ԵՄ ՄԱԴԱԴ «Սիրիահայերի և տեղացիների դիմակայունության բարձրացում» ծրագիրը, որի շրջանակներում տրամադրվում է սոցիալական և տնտեսական աջակցություն սիրիահայերին և տեղացիներին: Առաջին բաղադրիչով բնակարանային վարձի մասնակի փոխհատուցում է տրամադրվում առավել խոցելի սիրիահայ 100 ընտանիքների: 2020 թվականի հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածում 129 սիրիահայ ամենախոցելի ընտանիքներն ստացել են ամսական 100 եվրոյին համարժեք դրամ բնակավարձի փոխհատուցման համար: Մյուս բաղադրիչը տնտեսական ինտեգրումն է, մասնավորապես վճարովի մասնագիտական վերապատրաստումները, քանի որ Հայաստանում ինչպես տեղացիների, այնպես էլ սիրիահայերի համար աշխատանք գտնելը լուրջ մարտահրավեր է: Մասնագիտական վերապատրաստումները վճարվում են Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից՝ յուրաքանչյուր ամսվա համար մեկ մասնակցին վճարելով 125 եվրոյին համարժեք



ՀՀ դրամ: Բաղադրիչի շրջանակներում 100 շահառու մասնակցել է վճարովի մասնագիտական վերապատրաստման և նրանցից 73-ը պրակտիկայի ավարտին ձեռք են բերել մշտական զբաղվածություն:

Ընդհանուր առմամբ 282 մտահոգության առարկա հանդիսացող (ապաստան հայցողներ, փախստականի կարգավիճակ ստացած, փախստականի նման կարգավիճակ ունեցող և տեղահանված) անձ դիմել է ՀԿԽԸ՝ տարբեր կարիքներով:

Երեխաները դեռ չեն սթափվել կռվի պատճառած սթրեսից...

Արարատի մարզի Մասիս քաղաքում վարձակալած կիսադատարկ տան ամենամանրաշեշտ կահկարասին՝ հսկայական գազի վառարանն է, որի թույլ ջերմությունն իր շուրջն է հավաքել 31-ամյա Նարինեի չորս անչափահաս երեխաներից երեքին: 3-ամյա Մարթաը կուչ է եկել տատի գրկում, չի խոսում, անթարթ աչքերով մեզ է նայում, կարծես փորձում է փոքրիկ մտքով ընկալել առանց այն էլ արդեն անըմբռնելի նոր իրականությունն ու նախկինում այնտեղ գոյություն չունեցած մարդկանց՝ մեզ: Երկու աղջիկները՝ 5-ամյա Էդիտան և 10-ամյա Օվսաննան ևս լուռ են: Մեր հարցերին ի պատասխան շիկնում են, հայացքները թեթում: Ավագը դուստրը, 13-ամյա Մարիան դպրոցում է:



Նարինեի ընտանիքը Մասիս է տեղափոխվել Զադրուֆի շրջանից:

Ասում է՝ երեխաները դեռ չեն սթափվել կռվի պատճառած սթրեսից: Առաջին անօդաչուն հենց իրենց գյուղի մոտակայքում է պայթել:

- Շատ մոտ էր մեր տանը, բոլորս այդ ձայնից ենք վախեցած արթնացել, կիրակի էր, ամսի 27-ը: - Այա լուռ է, աչքերը խոնարհում: Սեպտեմբերի 28-ին տեղափոխվել են ամուսնու քրոջ գյուղ, որ սարերով շրջապատված խորանիստ բնակավայր է: Այնտեղ մնացել են մեկ օր, ապա ամուսինն ընտանիքին Ստեփանակերտից ճանապարհել է Երևան, ինքը մնացել օգնելու դրա կարիքն ունեցողներին: Օրեր շարունակ ծառայողական մեքենայով մի բնակավայրից մյուսը՝ ավելի ապահով վայր է տեղափոխել կանանց ու երեխաների:

Մասիսում արդեն Զայկական Կարմիր խաչի ընկերության աշխատակիցների օգնությամբ այս տունն են գտել: Մինչ այդ երկու ամսից ավել 14 հոգով ապրել են երկու սենյականոց փոքրիկ տան մեջ:

Զայկական Կարմիր խաչի ընկերության կողմից դպրոցում սոցիալ-հոգեբանական տարբեր դասընթացներ են կազմակերպվում Ղարաբաղից տեղափոխված ծնողների ու աշակերտների համար: Ավագ դուստրը՝ Մարիան, հաճույքով է մասնակցում: Նա հասցրել է հարմարվել նոր միջավայրին, նոր ընկերներ ձեռք բերել, Օվսաննան, սակայն չի հարմարվում, իր դպրոցն ու իր ընկերներին է ուզում:

Ընտանիքը մեծ է, ութ հոգի են՝ չորս երեխա, չորս մեծահասակ:

- Կարմիր խաչից սնունդ ու լավ հիգենայի ու անկողնային պարագաներ ենք ստացել: Սնունդը շատ լավն էր, ամեն ինչ կար փաթեթում,- ասում է Նարինեն: - Շնորհակալ ենք Կարմիր խաչին մեր սննդի հարցը լուծելու համար:

Դժվարություններից առանձնացնում է տան վարձն ու կոմունալ վճարումները:

- Զամարյա 70.000 դրամ կոմունալ ենք վճարում: Երեկ 57 հազար գազի ու լույսի փող ենք տվել, ջրի փողը մնացել է: Տան վարձը 100.000 է, չենք կարողացել գինն իջեցնել, իրենք էլ խնդիրներ

ունեն, ուրիշ տուն չկարողացանք ավելի էժան գնով ճարել, ճարահատյալ վերցրինք:

Ամուսինն աշխատանքի է անցել Երևանում, միկրոավտոբուսի վարորդ է: 87-ամյա Ալեքսեյ պապի ու սկեսրոջ ստացած թոշակներով կարողանում են տան վարձը վճարել: Իսկ չորս երեխային հասնող 36.000 դրամ նպաստի վրա ամեն անգամ ամուսնու վաստակած 4000-5000 դրամ օրավարձից հազար դրամ է ավելացնում, որպեսզի կոմունալ վճարումները կատարի:



Նարինեն մասնագիտությամբ ռուսերենի ուսուցչուհի է: Աշխատանքի համար գրանցվել է համայնքապետարանում:

Երկու դպրոցական աղջիկներին կարողացել են տեղի դպրոցում տեղավորել, 5 տարեկան Էդիտայի համար մի քանի մանկապարտեզ են դիմել, պատասխանել են, որ համավարակի պատճառով 18-ից ավել երեխա չեն վերցնում, մնացել է տանը:

- Տղաս էլ մայիսին 3 տարեկան կդառնա, լրացնելու դեպքում 2 տարուց հերթը կհասնի, երկու տարի հետո արդեն 5 տարեկան է դառնում: Կողքի մանկապարտեզ ենք դիմել, ասել են պետք է Ղարաբաղից եկած երեխաների որոշակի քանակ լրանա, որ խումբ բացենք:

Ասում է՝ ամեն ինչ ուներ Զադրուֆի իրենց տանը, որը ճիշտ է հին էր, պապի կառուցած տունն էր, բայց իրենցն էր: Բայց ամենից շատ ափսոսում է երեխաների նվեր ստացած նոր շորերը, որը չի հասցրել վերցնել: Պահել էր, որ երկու փոքրիկներին դպրոց ճանապարհելիս հագցներ:



Հայկական Կարմիր խաչի ընկերության Որոնում ծառայության գործունեությունն ուղղված է բնակչության տեղաշարժի արդյունքում կազմալուծված ընտանիքների վերամիավորմանը, պատերազմների, աղետների և հակամարտությունների հետևանքով անհայտ կորածների որոնմանը և զոհվածների շիրիմների վայրը հաստատող փաստաթղթերի հայտնաբերմանը, Երկրորդ Համաշխարհային պատերազմի ընթացքում տարհանված, գերության մեջ և հարկադիր աշխատանքային գաղութներում գտնվելու փաստը հաստատող փաստաթղթերի որոնմանը և հատկացմանը:

Ընտանեկան կապերի վերականգնում (ԸԿԿ)

2020թ. սեպտեմբերի 27-ին Ղարաբաղյան հակամարտության սրացման պատճառով Ազգային ընկերությունն ակտիվացրեց Ընտանեկան կապերի վերականգնման բաղադրիչը: Որոնում ծառայության հեռախոսահամարը ծառայում էր որպես ԹԵԾ գիծ: Սեպտեմբերից դեկտեմբեր ամիսների ընթացքում Որոնում ծառայությունն ստացել է մոտ 3.380 զանգ և այցելություն մարդկանցից, որոնք

ցանկանում էին տեղեկություն ստանալ անհայտ կորած հարազատի (զինծառայողների և քաղաքացիական անձանց) մասին: ՀԿԽԸ թիմի կողմից կատարվել են համապատասխան ուղղորդումներ:

ՀԿԽԸ Որոնում ծառայությունը 2020թ. ընթացքում ստացել և բացել է 9 որոնման հայտ՝ հետևյալ ուղղություններով՝ անհատների որոնում, ընտանիքի անդամների հետ վերամիավորմանը կամ սոցիալական իրավիճակի բարելավմանը նպաստող փաստաթղթերի որոնում և հատկացում, զոհվածների շիրիմների գտնվելու վայրի որոնում և դրանց գոյությունը հաստատող փաստաթղթերի տրամադրում, Երկրորդ Համաշխարհային պատերազմի ընթացքում տարհանված, գերության մեջ և հարկադիր աշխատանքային գաղութներում գտնվելու փաստը հաստատող փաստաթղթերի որոնում և հատկացում: Նոր հայտերի թվի նվազումը պայմանավորված էր համավարակի պայմաններում շփման սահմանափակումների հետ: Որոնում ծառայությունը ստացել է զանգեր մի շարք նոր հայտերի մասին, սակայն, սահմանափակումների պատճառով, շահառուների այցը ԿԳ հետաձգվել է:

Տվյալների բազայի լրացում

FLanswer տվյալների բազայի ծրագրի լրացումը ՀԿԽԸ ԸԿԿ գործընթացի համար: 2020թ. ընթացում տվյալների բազա է մուտք արվել 313 դեպք՝ առաջնահերթություն տալով 2015թ.-ից սկսած դեպքերին:

Սատարում անհայտ կորածների ընտանիքներին

ԿԽՄԿ-ի տվյալներով՝ Ղարաբաղյան հակամարտության հետևանքով 90-ականներին անհայտ կորած է համարվում 4541 մարդ, որոնցից մոտ 400-ի մասին որոնման հայտեր բացվել են Հայաստանում: ԿԽՄԿ-ն իրականացրել է բազում գնահատումներ և եկել այն

արդյունքում առաջ եկած սոցիալ-հոգեբանական ծանր հետևանքները հաղթահարելու գործում:

2020թ. ծրագրում ներգրավված էր 200 ընտանիք՝ Շիրակի (13 ընտանիք), Գեղարքունիքի (23 ընտանիք), Վայոց Ձորի (5 ընտանիք), Արմավիրի (41 ընտանիք), Լոռու (22 ընտանիք), Տավուշի (14 ընտանիք), Սյունիքի (46 ընտանիք), Արարատի (36 ընտանիք) մարզերից: ՀԿԽԸ մարզային մասնաճյուղերը կանոնավոր կապ են պահպանում այս մարզերում բնակվող անհայտ կորածների ընտանիքների հետ: Ըստ անհրաժեշտության շահառու ընտանիքների համար անցկացվել են հանդիպումներ սոցիալական, առողջապահական, հոգեբանական ոլորտների մասնագետների հետ:



եզրակացության, որ նույնիսկ տարիներ անց անհայտ կորածների ընտանիքներն (ԱԿԸ) ունեն տնտեսական, իրավական, հոգեբանական և/կամ սոցիալական կարիքներ:

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը, ԿԽՄԿ հայաստանյան պատվիրակության ֆինանսական աջակցությամբ, իրականացնում է «Սատարում անհայտ կորածների ընտանիքներին» ծրագիրը, որի նպատակն է սատարել անհայտ կորածների ընտանիքներին՝ հարազատի անհետացման

Համավարակի տարածմանը զուգահեռ, ՀԿԽԸ Որոնում ծառայությունը ստանում էր բազում զանգեր անհայտ կորածների ընտանիքներից, որոնք փաստում էին, որ հումանիտար օգնության կարիք ունեն: Ուստի, մարզպետարանների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակությամբ (ցուցակների ճշգրտում), անհայտ կորածների 200 ընտանիքներ ՀԿԽԸ կողմից ստացան սննդ և հիգիենիկ պարագաների փաթեթներ:

ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ



ՀԿԽԸ Առաջին օգնության ուսումնամեթոդական կենտրոնը ԱՕ գիտելիքներ և հմտություններ է տարածում բնակչության տարբեր խավերի և տարիքային խմբերի շրջանում, իրականացնում է ԱՕ սպասարկում զանգվածային միջոցառումների ժամանակ, ինչպես նաև՝ աճող սերնդի անվտանգ վարքագծի ձևավորմանն ուղղված ծրագրեր:

Կենտրոնն իրականացնում է Առաջին օգնության Եվրոպական խորհրդատվական կենտրոնի չափանիշներին համապատասխանող առաջին օգնության (ԱՕ) և անվտանգ վարքագծի դաստիարակման (ԱՎԴ) դասընթացներ տարբեր տարիքային և մասնագիտական խմբերի համար:

ԱՕ դասընթացներ

2020թ.-ին դասընթացներ են իրականացվել ՀԿԽԸ կամավորների, տարբեր կազմակերպությունների աշխատակիցների, Տավուշի և Վայոց Ձորի սահմանամերձ և հեռավոր համայնքների բնակիչների, սահմանամերձ գյուղերի քաղաքացիական պաշտպանության թիմերի անդամների, Ղարաբաղյան հակամարտության սրացման հետևանքով տեղահանվածների և Նրանց հյուրընկալող հաստատությունների

անձնակազմերի համար: Ընդհանուր առմամբ, 2020 թվականի ընթացքում կենտրոնն իրականացրել է 120 դասընթաց և 25 սեմինար, որոնց մասնակցել է 2500 մարդ:

Մասնավորապես՝ դասընթացներ և սեմինարներ են իրականացվել HSBC, AMERIABANK, «Ակտի Գրուպ», «Ջեյ Թի Այ», «Դաբլ թրի բայ Հիլտոն», «Զվարթնոց» օդանավակայանի, «Արշավներ ակումբ», ԿՈԿԱ-ԿՈԼԱ ՅԵԼԼԵՆԻԿ, ՄԱԿ-ի գրասենյակի և մի շարք այլ կազմակերպությունների աշխատակիցների համար:

Առաջին օգնության դասընթացներ ՀՀ սահմանամերձ համայնքների բնակիչների համար

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) հետ համագործակցության շրջանակներում իրականացվել է «Առաջին օգնության հիմունքներ» դասընթացներ ՀՀ Տավուշի մարզի 10 (Բարեկամավան,Դովեղ, Բաղանիս, Ոսկեպար, Սևբար, Կիրանց, Ներքին Ծաղկավան, Բերքաբեր,Վազաշեն, Այգեհովիտ), Վայոց Ձորի՝ 3 (Արենի, Չառիթափ, Խաչիկ) և Արարատի մարզի 2

ՏԱՐԵԳՈՒՄ 2020



(Պարույր Սևակ և Յերասխավան) սահմանամերձ համայնքներում: Դասընթացներին մասնակցել են 177 հոգի:

**Առաջին օգնության դասընթացները
ՀՀ սահմանամերձ համայնքների
բուժանձնակազմի համար**

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) հետ համագործակցության շրջանակներում իրականացվել են «Առաջին օգնության հիմունքներ» դասընթացներ ՀՀ Տավուշի մարզի 25, և Վայոց Ձորի 7 համայնքների ամբուլատորիաների և բուժկետերի աշխատակիցների համար: Դասընթացներին մասնակցել է 95 բուժաշխատող:

Առաջին օգնության դասընթացներ ՀՀ Տավուշի, Գեղարքունիքի, Արարատի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի կամավորների համար

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) օժանդակությամբ իրականացվել է «Առաջին օգնության հիմունքներ» 5 դասընթաց Տավուշի, Գեղարքունիքի, Սյունիքի, Արարատի և Վայոց Ձորի 95 կամավորների համար :

Կազմակերպվել են ԱՕ մրցումներ ՀԿԽԸ Տավուշի, Սյունիքի, Վայոց Ձորի, Գեղարքունիքի, Արարատի և Երևանի թիմերի միջև:

Հաղթող է ճանաչվել Սյունիքի թիմը, իսկ Վայոց Ձորի և Գեղարքունիքի թիմերը զբաղեցրել են համապատասխանաբար 2-րդ և 3-րդ տեղերը:

ԱՕ հրահանգիչների նախապատրաստում

2020 թ. Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) օժանդակությամբ իրականացվել է ՀՀ մարզերից և Լեռնային Ղարաբաղից ԱՕ հրահանգիչների վերապատրաստման 2 դասընթաց, որոնց մասնակցել է ՀԿԽԸ 20 ԱՕ հրահանգիչ:

Արտակարգ իրավիճակների նախարարություն, Կարմիր խաչի միջազգային կոմիտե և Հայկական Կարմիր խաչի ընկերություն (ԱԻՆ-ԿԽՄԿ-ՀԿԽԸ) համագործակցություն

ԱԻՆ-ԿԽՄԿ-ՀԿԽԸ համագործակցության ծրագրի շրջանակներում իրականացվել են «Առաջին օգնության հիմունքներ» և «Աճյունների հետ վարվելակարգի կանոններ» թեմաներով գիտելիքների թարմացման դասընթացներ Տավուշի մարզի 12 սահմանամերձ (Ազատամուտ, Չինարի,

Այգեպար, Մովսես, Պառավաբար, Ներքին Կարմիրաղբյուր, Ոսկևան, Բերդավան, Կոթի, Դովեղ, Չորաթան և Սարիգյուղ) գյուղերի Քաղաքիական պաշտպանության թիմերի 221 անդամների համար: Բոլոր մասնակիցներին տրամադրվել է 1 «Առաջին օգնության տարրեր» ուսումնական ձեռնարկը, յուրաքանչյուր թիմի համար թարմացվել է 2-ական ԱՕ արկղիկի և 1 ԱՕ պայուսակի պարունակությունը:

Արձագանք Ղարաբաղյան հակամարտության սրացմանը

ՀԿԽԸ ԱՕ թիմը «Գերիների, անհայտ կորածների տվյալների ճշտման և հարցման, ինչպես նաև զինծառայողների հարազատների կողմից բարձրացված հարցերի պատասխանելու, տեղեկատվական կենտրոն»-ի բացման օրվանից իրականացրել է հերթապահություններ և շուրջ 1500 ծնողների և աշխատակիցների ցուցաբերել է առաջին օգնություն և առաջին հոգեբանական աջակցություն:

ԼՂ հակամարտության հետևանքով 826 տեղահանվածի (196 հյուրընկալողներ), 600 կամավորների համար կազմակերպվել և իրականացվել են ԱՕ դասընթացներ: Պատրաստվել և նվիրաբերվել է 100 անհատական ԱՕ պայուսակ և 75 ԱՕ արկղիկներ:

Ֆուտբոլի խաղերի սպասարկում

2020թ. ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի շրջանակներում Երևանում կայացած բոլոր խաղերի ընթացքում ՀԿԽԸ ԱՕ խմբերն իրականացրել են առաջին օգնության ծառայություն:

Հանրային միջոցառումներ

Փետրվարի 20-ին «Ապարանյան ձմեռ 2020» փառատոնի ընթացքում առաջին օգնության ծառայություն է տրամադրվել շուրջ 30 բաղաբացու:

ՀԿԽԸ ԱՕ թիմը մասնակցել է ՀՀ ԱԻՆ-ի կողմից դպրոցներում, ուսումնական հաստատություններում իրականացվող վարժանքներին:

Մեդիա համագործակցություն

«Շանթ» հեռուստաընկերության հրավերով Առաջին օգնության թիմը նկարահանվել է «Բուժ-Ինֆո» հաղորդաշարի նոր եթերաշրջանի 50 հաղորդումներում:



Հայկական Կարմիր խաչի ընկերության գործողությունները Covid-19 համավարակի ժամանակ

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը (ՀԿԽԸ) հանդիսանալով աջակցող կառույց կառավարությանը մարդասիրական ոլորտում և երկրում ամենախոշոր կամավորական կազմակերպություն, ինչպես նաև ներկայացվածություն ունենալով բոլոր մարզերում և բազմաթիվ համայնքներում, մշտապես կանգնած է կառավարության և բնակչության կողքին:

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը (ՀԿԽԸ) իր 11 մարզային, մեկ տարածաշրջանային, և 52 համայնքային մասնաճյուղերի ցանցով, փորձառու և նվիրված անձնակազմով, տարեկան կտրվածքով մոտ 3000 կամավորներով COVID-19 արձագանքի գործողություններում աջակցող կառույց է պետական մարմիններին մարդասիրական ոլորտում:

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը ներգրավված է ՀՀ փոխվարչապետի հովանու ներքո ստեղծված ազգային արձագանքման

համակարգում: Արտակարգ դրության առաջին իսկ օրվանից ՀԿԽԸ-ն Պարետատան, ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ Առողջապահության, ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունների, ՀՀ բոլոր մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի հետ համագործակցությամբ և համակարգմամբ, իրականացնում է գործառույթներ, որոնք ուղղված են խոցելի խմբերի կարիքներին համապատասխան արձագանքմանը:

Ստեղծված իրավիճակին արագ և արդյունավետ արձագանքելու համար ՀԿԽԸ-ն անհապաղ մշակեց կարճաժամկետ, միջևաժամկետ և երկարաժամկետ արձագանքի պլաններ, նախաձեռնեց տեղական և միջազգային ռեսուրսների մոբիլիզացիա, հավաքագրեց և վերապատրաստեց 1500 կամավորի:

ՀԿԽԸ արձագանքը մշակվել է՝ հիմնվելով Ստեփանավանի տարածքային մասնաճյուղում գործող «Արտակարգ իրավիճակների արձագանքման և հումանիտար աշխատանքների համակարգման» կենտրոնի կարողությունների վրա, որի տեխնիկական բազան թույլ է տալիս

իրականացնել աղետների ռիսկի բազմակողմանի ուսումնասիրություն և արագ ու արդյունավետ արձագանքման սցենարների մշակում:

Քովիդ-19 համավարակի հայտարարումից անմիջապես հետո մշակվել են աղետի զարգացման սցենարները և անհրաժեշտ արձագանքը, քարտեզագրվել են Հայաստանի ամբողջ տարածքում Հայկական Կարմիր խաչի հնարավորությունները՝ կամավորների, տրանսպորտի և կապի, պահեստների, օգնության կարիք ունեցող շահառուների բազան, ճշտվել են արտակարգ իրավիճակում կամավորների առաջնային գործողությունները և այլն:

Իրականացվել է՝

- ռիսկի հաղորդակցություն և հանրային իրազեկում (ավելի քան 1 միլիոն անձ)
- պաշտպանիչ միջոցների տրամադրում (մոտ 1

Ռիսկի հաղորդակցություն և հանրային իրազեկում

Մարտի 16-ից՝ Քովիդ-19 համավարակի հայտարարման առաջին իսկ օրվանից, ՀԿԽԸ կողմից հավաքագրված և պատրաստված շուրջ 1500 կամավորները պարբերաբար Հայաստանի քաղաքային և գյուղական համայնքներում տարածել են տեղեկատվական թերթիկներ և բնակչության շրջանում իրականացրել իրազեկման աշխատանքներ: Վարակից պաշտպանվելու վերաբերյալ իրազեկող թերթիկները շահառուներին են տրամադրվում նաև մարդասիրական օգնության փաթեթի հետ միասին, տրվել են նաև մարզպետարաններին և ՏԻՄ-երին, գործընկեր կազմակերպություններին:

Հաշվի առնելով Հայաստանում Քովիդ-19 համավարակի տարածման շարունակական աճը, ՀՀ Վարչապետի աշխատակազմի հետ



- միլիոն դիմակ, ալկոզել, սփրեյ, ԱՕ արկղիկներ)
- մարդասիրական աջակցություն՝ սնունդ և հիգիենիկ պարագաներ (մոտ 33 000 անձ)
- թեժ գծի միջոցով սոցիալ-հոգեբանական աջակցություն (ավելի քան 30 000 անձ)
- աջակցություն տնային տնտեսություններին (32 տնային տնտեսություն)
- էլեկտրաէներգիայի (733 անձ), կոմունալ վճարների (11 419 անձ) և բնակվարձերի փոխհատուցում (421 անձ)
- կրթական գործընթացի համար պլանշետների տրամադրում (500 երեխա):

համագործակցությամբ խորհրդակցությունների արդյունքում, Հայկական Կարմիր խաչի ընկերությունը (ՀԿԽԸ) հանրային իրազեկման քարոզարշավ սկսեց՝ հանրապետության ամբողջ տարածքում, հատկապես ուշադրության կենտրոնում պահելով բակերը և հարակից վայրերը, որտեղ մարդիկ չեն կրում դիմակներ և չեն պահպանում սոցիալական հեռավորություն:

Հունիսի 15-ից Հայկական Կարմիր խաչի ընկերության կամավորները շրջում են մարդաշատ տարածքներում, բակերում և հանրային տրանսպորտում՝ բաժանելով իրազեկման թերթիկներ, բնակչությանը կրկին հիշեցնելով դիմակներ կրելու, սոցիալական հեռավորություն



պահելու, Զովիդ-19 վարակից պաշտպանվելու կանոնները պահպանելու կարևորության մասին, տրամադրելով դիմակ և ձեռնոց, նաև՝ ավելոցել: ՀԿԽԸ կամավորները իրազեկող թռուցիկներ, պաստառներ են փակցնում շքամուտքերում, գովազդային տախտակների, սյուների, մեքենաների վրա, Մետրոպոլիտենում:

Իրազեկման արշավն իրականացվել է Երևանի բոլոր վարչական շրջաններում և մարզերում, բաժանվել է ավելի քան 470 000 պաշտպանիչ միջոց՝ դիմակ, ձեռնոց և ավելոցել:

Հուլիսի 3-ից Երևանում, իսկ 9-ից՝ մինչև հուլիսի 15-ը մարզկենտրոններում ժամը 17:00-ից 20:00-ը գործում էին տեղեկատվական տաղավարներ, որտեղ Հայկական Կարմիր խաչի ընկերության կամավորները հանրությանն իրազեկում էին Զովիդ-19 վարակից պաշտպանվելու վարքականոնների մասին, տրամադրում դիմակ, ձեռնոց և ավելոցել:

Արշավի նպատակն էր հանրության ուշադրության կենտրոնում պահել անվտանգ վարվելակերպի կանոնների պահպանման կարևորությունը, քանի որ արդեն 3 ամսից ավելի շարունակվող համավարակի պայմաններում մարդկանց զգոնությունը թուլանում է և անհրաժեշտ է իրազեկման տարբեր ձևաչափեր կիրառել:

Մարտի 16-ից տարածվել է ավելի քան 500 000 տպագիր տեղեկատվական նյութ: Նույն նյութերը տարածվել են նաև առցանց տարբերակով՝ ՀԿԽԸ սոցիալական մեդիայի էջերի միջոցով: Ռիսկի հաղորդակցման բոլոր նյութերն ու համայնքների ներգրավման ռազմավարությունները հաշվի են առնում ընտանեկան բռնության և երեխաների

պաշտպանության հարցերը, հաշմանդամություն ունեցող անձանց և փախստականների հետ աշխատանքի նրբությունները՝ հաշվի առնելով միջերկրյա ու ապատեղեկատվությունը, որպեսզի ռիսկի հաղորդակցման հետագա մոտեցումները ձևավորվեն դրանց համապատասխան: Նյութերի բովանդակությունը մշակվել է՝ ըստ Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի և Առողջապահության համաշխարհային կազմակերպության խորհուրդների:

Հումանիտար աջակցություն

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը, մարտ-դեկտեմբեր ամիսների ընթացքում, ըստ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից սահմանած պարենային ապրանքների և պաշտպանական միջոցների մեկ ամսվա համար նախատեսված նվազագույն զամբյուղի, սննդով և հիգիենիկ պարագաներով աջակցել է Զովիդ-19 համավարակով պայմանավորված առավել խոցելի մոտ 33 000 անձի՝ հանրապետության ամբողջ տարածքում, հասանելի լինելով 925 քաղաքային և գյուղական համայնքներից 792-ում:

Մարդասիրական օգնության փաթեթները Հայկական Կարմիր խաչի ընկերության կամավորները հասցնում էին շահառուների տներ՝ այդ կերպ պաշտպանելով նրանց վարակից:

Շահառուներն են. միայնակ և անժառանգ կենսաթոշակառուներ, հաշմանդամություն ունեցող անձինք, սիրիահայեր, մանկատան շրջանավարտներ, տուն ինտերնատների

շահառուներ, ինքնամեկուսացվածների, ցուցումով ինքնամեկուսացվածներ, անհայտ կորածների ընտանիքներ, ականներից տուժածներ, բազմազավակ և խոցելի ընտանիքներ:

Մարդասիրական աջակցությունը տրամադրվել է 33 աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից տրված ցուցակներով:

Հոգեբանական կենտրոններ և Թեժ գիծ

Հայկական Կարմիր խաչի ընկերության Սոցիալ-հոգեբանական աջակցության 2 կենտրոնները, որտեղից հոգեբանները սոցիալ-հոգեբանական աջակցություն են տրամադրում

հաշմանդամություն ունեցող անձանց կենցաղային հարցերում, այդ թվում՝ գնումներ կատարելու հարցում: Այս ընթացքում կամավորներն այցելել և օգնել են մոտ 1000 անձի: Դիմողների, հատկապես՝ վարակվածների և մեկուսացվածների հետ տարվող հոգեբանական աշխատանքը ուղղված է հիմնականում անձի հոգեբանական վիճակի կայունացմանը, ինչպես նաև մեկուսացման և սոցիալական շփումների սահմանափակման կանոնների պահպանմանը, ինչն իր հերթին նպաստում է վարակի տարածման կանխմանը: Դիմողների հետ աշխատանքը տարվում է հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները, սեռը և ընտանեկան կարգավիճակը:



անհանգստություններ ունեցող քաղաքացիներին, այդ թվում՝ մեկուսացված անձանց:

ՀԿԽԸ Թեժ գծերի հեռախոսահամարն է 8184:

Մարտի 16-ից Հայկական Կարմիր խաչի ընկերության են Թեժ գծի հեռախոսահամարներով ստացվել է 30 000-ից ավելի զանգ Երևանից և բոլոր մարզերից, որից 70 տոկոսը՝ սոցիալ-հոգեբանական աջակցության, 26 տոկոսը՝ զուտ հոգեբանական աջակցության, և 4 տոկոսը՝ տեղեկատվության տրամադրման հարցերով:

Բնակչության հետ հետադարձ կապը հնարավորություն է տալիս հայտնաբերելու դժվար իրավիճակում հայտնված մարդկանց, որոշելու նրանց կարիքները և կազմակերպելու, որ կամավորներն այցելեն նրանց և օգնեն աջակցության կարիք ունեցող տարեցներին ու

Փախստականներ, ապաստան հայցողներ, փախստականի կարգավիճակ ունեցող անձինք

Covid -19 համավարակի օրերին փախստականների, ապաստան հայցողների, փախստականի կարգավիճակ ունեցող անձանց աջակցությունն իրականացվել է հեռավար ռեժիմով՝ գրասենյակում կուտակումներից խուսափելու համար:

Այս ընթացքում 8 լեզվով թարգմանվել և տարածվել են Պարետի որոշումներն ու վարակից պաշտպանվելու վերաբերյալ իրազեկման թերթիկները:

Բոլոր շահառուների հետ առցանց շարունակվել է հոգեբանական անհատական խորհրդատվությունը: Հեռավար ռեժիմով կազմակերպվել են նաև դասընթացներ:

Ընթացիկ ծրագրերի շրջանակներում շահառուներին տրամադրվող տան վարձի փոխատուցման և սննդի փաթեթի աջակցությունը, իրավիճակից ելնելով, տեղին էին և ծայրահեղ անհրաժեշտ:

Առավել խոցելի փաստականներն ըստ կարիքի ներառվել են Covid -19 համավարակի արձագանման ծրագրերում՝ ստանալով սնունդ և սոցիալ-հոգեբանական ծառայություն:

ՀՀ-ում ապրող մոտ 70 ապաստան հայցող և փախստական մայիսին և հունիսի սկզբին ստացան սննդի փաթեթներ:

Աջակցություն տնային տնտեսություններին՝ անասնապահության ոլորտում

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը Գեղարքունիքի մարզում անասնապահության ոլորտում աջակցել է 32 տնային տնտեսությունների՝ տնտեսությունների երկարատև ինքնաբավ գործունեությանը նպաստելու նպատակով:

«Համայնքային ինտեգրացված տնային խնամք և առողջ ծերացում»

ՀԿԽԸ շարունակում է իրականացնել «Համայնքային ինտեգրացված տնային խնամք և առողջ ծերացում» ծրագիրը ՀՀ Լոռու և Շիրակի մարզերում, ծառայություններ սկսել են տրամադրվել նաև Վայոց Ձորի մարզում:

Ծրագրի ինտեգրացված տնային խնամքի բաղադրիչի շահառուները վերոնշյալ երեք մարզերի տարեց, բրոնխիալ և հիվանդություն կամ հաշմանդամություն ունեցող անձինք են, որոնք ընտրվում են սոցիալական ծառայությունների, ինչպես նաև առողջապահական համակարգի ներկայացրած ցուցակներից՝ ծրագրի աշխատակիցների կողմից մանրամասն անհատական կարիքի գնահատման հիման վրա:

Ծրագրի շահառուների խնամքն իրականացնում են՝

1. բուժքույրերը երեք մարզում՝ 11 բուժքույր,
2. տնային խնամողները՝ յուրաքանչյուր մարզում 30 տնային խնամող,
3. կամավորները՝ Լոռու մարզում՝ 42, Շիրակի մարզում՝ 53, Վայոց Ձորի մարզում՝ 10, որոնք անցել են համապատասխան դասընթացներ:

2020 թ.-ին ծառայություններն սկսել են տրամադրվել ոչ միայն մարզկենտրոններում, այլև հեռույալ քաղաքներում՝ Սպիտակ, Ալավերդի, Արթիկ, Մարալիկ:

Ծառայությունները հստակ տարանջատված են խնամք իրականացնող այս երեք խմբերի համար:



Մասնավորապես, բուժքույրերի կողմից իրականացվում են ներարկումներ՝ ըստ տեղամասի բժիշկի նշանակման, մաշկի, լորձաթաղանթների խնամք, ատամների, բերանի խոռոչի խնամք, պառնկելախոցերի կանխարգելում ու մշակում, հիվանդի շարժողունակությունը վերականգնելու նպատակով հատուկ վարժությունների, մերսումների իրականացում և այլն: Տնային խնամողների կողմից տրամադրվում է աջակցություն կենցաղային հարցերում, մասնավորապես՝ տան մաքրում, սննդի պատրաստում, աջակցություն սնունդ ընդունելիս: Կամավորների կողմից մատուցվող ծառայությունները հիմնականում ներառում են այցելություններ շահառուներին, զրույցներ նրանց հետ, ընթերցանություն, ուղեկցում խանութ, դեղատուն, աջակցություն կոմունալ վճարումների կատարման, փաստաթղթերի լրացման ընթացքում և այլն:

Անհատական կարիքից ելնելով շահառուները ստանում են նաև անվասայլակներ, քայլակներ, հակապարկելախոցային բարձեր և ներքևակներ, ձեռնափայտեր, այլ անհրաժեշտ պարագաներ: Բոլոր երեք խնամք իրականացնողները, ծառայության մատուցմանը զուգահեռ, տրամադրում են նաև սոցիալ-հոգեբանական աջակցություն:

Խնամքն իրականացվում է տեղամասային պոլիկլինիկաների հետ սերտ համագործակցությամբ, տեղամասային բժշկի անմիջական հսկողությամբ, անհրաժեշտության դեպքում նեղ մասնագետների ներգրավմամբ: 2020 թվականի ավարտին ծրագրում ներառվել է 472 շահառու: 2020 թվականին ՀԿԽԸ շարունակել է տնային խնամքի տրամադրումը համավճարի սկզբունքով: Տարվա ավարտին ՀԿԽԸ ունեցել է



գրանցված 93 անվճար և 379 համավճարով շահառու:

Ծրագրի երկրորդ բաղադրիչը Ակտիվ երկարակեցությունն է, որի նպատակն է ծերացմանը զուգընթաց երկարացնել առողջ և որակյալ կյանքի տևողությունը: ՀՀ Շիրակի և Լոռու, իսկ 2020 թվականից արդեն Վայոց Ձորի մարզպետարանների հետ համագործակցությամբ մարզերում ստեղծվել ու գործում են տարեցների կազմված Ակտիվ երկարակեցության 26 Նախաձեռնող խմբեր: Այսպիսով, տարվա ավարտին երեք մարզերում ստեղծվել են 358 մասնակից (190 կին և 168 տղամարդ) ընդգրկող 26 Նախաձեռնող խմբեր:

Մասնակցության վրա հիմնված ակտիվ երկարակեցությունը հնարավորություն է տալիս մարդկանց ակտիվ դեր ունենալ իրենց սեփական և համայնքային կյանքի բարելավման գործընթացում: Մարդիկ ձևավորում են խմբեր, բացահայտում և վերլուծում են իրենց և համայնքի խնդիրները, որոշումներ կայացնում և հանդես գալիս որպես հիմնական դերակատար վերը նշված գործընթացներում: Ծրագրի նպատակն է ավելացնել համայնքային կյանքում ներգրավված տարեց անձանց և նրանց շփումները, այսինքն, խթանել տարեցների մասնակցությունը համայնքային կյանքի տարբեր ոլորտներում: ՀԿԽԸ-ն ապահովել է Նախաձեռնող խմբերի ուսուցանումը, կարողությունների զարգացումը:

Համայնքապետարանները նախաձեռնող խմբի անդամներին հավաքատեղի են հատկացրել՝ նրանց պարբերական հանդիպումների, աշխատանքի և գործողությունների պլանավորման համար:

Նախաձեռնող խմբերին հնարավորություն է տրվել ծրագրային առաջարկով դիմել փոքր դրամաշնորհներ ստանալու՝ իրենց հետաքրքիր նախաձեռնությունները կյանքի կոչելու համար:

2020 թվականի ընթացքում ՀԿԽԸ տնային ինստիտուտի ծառայություն է տրամադրել նաև 90 շահառուների Լոռու մարզում՝ պետական դրամաշնորհի շրջանակներում:

Խարանի և խտրականության նվազեցում և սոցիալ-հոգեբանական աջակցություն

2020 թվականին ՀԿԽԸ-ն շարունակել է ՀՀ առողջապահության նախարարության Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոնի հետ համագործակցությամբ իրականացնել «Խարանի և խտրականության նվազեցում և սոցիալ-հոգեբանական աջակցություն» դրամաշնորհային ծրագիրը, որի թիրախ են հանդիսանում բոլոր ՏԲ հիվանդները արտահիվանդանոցային փուլում:

ՏԱԿ ՊՈԱԿ-ի հետ համագործակցության շրջանակներում ՏԱԿ ՊՈԱԿ-ի համապատասխան բաժինը ՀԿԽԸ տրամադրել է ամսական տեղեկատվություն՝ հոսափտալացումից

ամբուլատոր փուլ անցած և արտահիվանդանոցային փուլում գտնվող հիվանդների վերաբերյալ (474):

Առողջության պահպանման առաջնային օղակի, մասնավորապես տուբերկուլոզի ախտորոշմամբ և բուժմամբ զբաղվող բուժանձնակազմի հետ սերտ համագործակցություն է ստեղծվել, որի շրջանակներում ՏԲ կաբինետների կողմից տրամադրվել են բուժումը ամբուլատոր փուլում սկսող, բուժման հետևողականության խախտման միտում ունեցող և հիվանդանոցային փուլից հետո արտահիվանդանոցային փուլում բուժումը չհարունակած հիվանդների մասին տեղեկատվություն:

ՀԿԽԸ հոգեբանները և կամավորները հանդիպում են կազմակերպել հիվանդների հետ, սոցիալ-հոգեբանական և հոգեբանական աջակցություն տրամադրել նրանց՝ շեշտադրելով բուժմանը հետևողական լինելու կարևորությունը: Այցերի,

խոցելի խմբերի շրջանում ՄԻԱՎ արագ հետազոտությունը խթանելու վերաբերյալ լուսաբանման աշխատանքներ են իրականացվել ՀՀ բոլոր մարզերում՝ ընդհանուր թվով 4483 աշխատանքային միգրանտների, նրանց զուգընկերների և ՄԻԱՎ-ի նկատմամբ այլ խոցելի խմբերի ներկայացուցիչների հետ:

Շաբարային դիաբետի կանխարգելում

2020 թվականի ընթացքում ՀՀ Արարատի, Արագածոտնի և Գեղարքունիքի մարզերում Իրականացվել է Շաբարային դիաբետի կանխարգելմանը և խոցելի խմբերի կրթմանը նվիրված ծրագիրը: Ծրագրի գործունեության թիրախ հանդիսացող 48 համայնքներում (16 յուրաքանչյուր մարզում) ձևավորված 48 ինքնօգնության խմբերում իրականացված գործունեության շնորհիվ շահառուները ստացել են անհրաժեշտ գիտելիքներ շաբարային դիաբետի, ճիշտ սննդակարգի և ընդհանրապես առողջ



խորհրդատվությունների վերաբերյալ վարվել է էլեկտրոնային շտեմարան: Բուժումը բարեհաջող ելքով ավարտած հիվանդների (318) համար կազմակերպվել են «վերածնունդի» տոնակատարություններ:

Խարանի և խտրականության նվազեցմանն ուղղված 99 միջոցառում է կազմակերպվել ք. Երևանում և ՀՀ բոլոր մարզերում, որոնց մասնակցել է 1155 անձ:

Իրականացվել են ֆյուլորոգրաֆիկ հետազոտություններ (358) ՏԲ կոնտակտավորների շրջանում: Աշխատանքային միգրանտների և այլ

ապրելակերպի վերաբերյալ: Կարևոր է նշել նաև, որ այս ծրագիրը չի սահմանափակվել միայն ինքնօգնության խմբերով, այլև ներգրավել է 90 բժշկի և 64 բուժքրոջ՝ վերջիններիս ուշադրությունը սևեռելով շաբարային դիաբետի խնդիրներին: Այդ նպատակով կազմակերպվել են սեմինարներ և կլոր սեղան-քննարկումներ: Նշանակալի է թվով 160 կամավորների ներդրումը ծրագրի կայացման և իրականացման գործընթացում, ովքեր օգնել են խմբերի ձևավորմանը, առողջ ապրելակերպի ջատագովմանը, միջոցառումների կայացմանը և վերջիններիս շարունակական բնույթ կրելուն:

ՏԱՐԵԳՐ 2020





«Արտակարգ իրավիճակներում առողջապահական խնդիրների նկատմամբ տեղական համայնքների դիմակայունության բարձրացում Հարավային Կովկասում»

2020 թվականին ՀԿԽԸ շարունակել է իրականացնել «Արտակարգ իրավիճակներում առողջապահական խնդիրների նկատմամբ տեղական համայնքների դիմակայունության բարձրացում Հարավային Կովկասում» ծրագիրը, որի նպատակն է բարձրացնել համայնքների դիմակայունությունը՝ բնակչության առողջության վրա ազդեցությունների և արտակարգ իրավիճակների բացասական ազդեցությունը և հետևանքները նվազեցնելու համար, ինչպես նաև բարելավել համայնքների համաճարակներին դիմակայելու, առաջին օգնության, հոգեբանական աջակցության կարողությունները: Ծրագրում ընդգրկված Տավուշի, Սյունիքի, Վայոց Ձորի մարզերում և Երևանում ստեղծվել են Կարմիր խաչի կամավորների ցանց, բաղկացած 24 առաջնորդ և 105 համայնքային կամավորներներից: ՀԿԽԸ վերապատրաստված համայնքային կամավորներն իրականացրել են համայնքների կարողությունների զարգացմանը և իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումներ, որոնք կնպաստեն արտակարգ իրավիճակների հետևանքով առաջացած առողջապահական խնդիրների նկատմամբ համայնքների դիմակայունության բարձրացմանը:

Ծրագիրն իր ներդրումն ունի մարզային և ազգային մակարդակներում արտակարգ իրավիճակներում

առողջապահական կարողությունների զարգացմանը՝ ՀՀ ԱՆ-ի, ԱԽՆ-ի և Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների ֆեդերացիայի սերտ համագործակցության, ինչպես նաև Կարմիր խաչի և Կարմիր մահիկի շարժման, ԱՀԿ-ի, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի, ՄԱԿ-ի այլ գերատեսչությունների և միջազգային ՀԿ-ների միջև միջուրտային համակարգման մեխանիզմների միջոցով:

Գթություն

ՀԿԽԸ Սյունիքի մարզային մասնաճյուղը՝ «Չաարատ Կապան» ՓԲԸ-ի աջակցությամբ իրականացնում է «Գթություն» ծրագիրը, որի շրջանակներում 200 միայնակ տարեց տարին մեկ ստանում են սննդի և հիգիենիկ պարագաների փաթեթներ և դեղահաբեր: 30 անկողնային միայնակ տարեցները ծանրոցները ստանում են տարին երկու անգամ, իսկ կամավորները նրանց բոլորի կողքին են լինում ամբողջ տարին՝ նշելով Ամանորը, Չատիկը և ծննդյան օրերը:

Աջակցություն համայնքներին

2018թ. հուլիսից մեկնարկած «Սիրիահայերի դիմակայունության բարձրացում» ծրագիրը իրականացվում է Եվրամիության, Ավստրիական Կարմիր խաչի և Ավստրիական Չարգացման գործակալության համատեղ ֆինանսավորմամբ:

Ծրագրի սոցիալ - հոգեբանական բաղադրիչի շրջանակներում շարունակվել է երիտասարդ կամավորների միջոցով սոցիալ-հոգեբանական

այցելու ծառայության կազմակերպումը Երևան, Աբովյան և Զրազդյան բաղաձևերում 200-ից ավել միայնակ փախստական հանրակացարանաբնակ և սիրիահայ, տեղացի տարեցների համար:

Ըստ կարիքի՝ այցելություններ են կազմակերպվել կամավորների կողմից, տրամադրվել է սոցիալ-հոգեբանական աջակցություն հեռախոսով: Եռամսյակը մեկ անգամ տրամադրվել են սննդի և հիգիենիկ պարագաների փաթեթներ, հակահամաճարակային պաշտպանիչ միջոցներ:

Տարվա ընթացքում կամավորները շահառուների սոցիալականացմանը և հանգստի կազմակերպմանը աջակցելու նպատակով իրականացրել են զանազան սոցիալական և մշակութային միջոցառումներ՝ այցելություններ թատրոններ, համերգներ, տեսարժան վայրեր:

Ծրագրի շրջանակներում հիմնված Սիրիահայերի աջակցման Սոցիալ-հոգեբանական կենտրոնը, որի նպատակն է նպաստել սիրիահայերի ինտեգրմանը՝ հոգեբանական անհատական և խմբային խորհրդատվություններ է իրականացրել սիրիահայ տարբեր տարիքային խմբերի, ինչպես նաև ընտանիքների համար: Յուրաքանչյուր ամիս սիրիահայերի սոցիալականացմանն ուղղված մշակութային միջոցառումներ է իրականացվել: Մշակվել և շահագրգիռ կազմակերպությունների միջոցով տարածվել են կենտրոնի ծառայությունները լուսաբանող տպագրական և առցանց նյութեր:

Ծրագրի կրթական բաղադրիչով 4 տարատեսակ ծրագրեր են իրականացվել Երևանի 6 դպրոցներում, ինչպես նաև պետական ու 34 ներկայացուցիչների համար:

«Երեխաների կայուն զարգացում» ենթածրագիրը 20 պարապմունքներից բաղկացած դասընթաց է: Այն նախագծման է Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային ընկերությունների և «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության «Երեխաների կայուն զարգացում» ծրագրի հիմա վրա: Նպատակն է նպաստել հակամարտության գոտուց տեղահանված երեխաների ինտեգրմանն ու դժվարությունների հաղթահարմանը: Այն իրականացվել է վերապատրաստված 27 կամավորների օգնությամբ՝ շուրջ 112 երեխաների համար Երևանի 6 դպրոցներում:

Հանդուրժողականության ուսուցում» ենթածրագրի շրջանակներում 84 ուսուցիչներ վերապատրաստման դասընթացներ են անցել կրթական ոլորտի փորձագետների ներգրավմամբ, որից հետո ղեկավարվելով ծրագրի համապատասխան ուղեցույցներով տարրական դասարանների շուրջ 4600 աշակերտների համար իրականացրել են դասընթացներ:

«Հոգեբանական առաջին օգնություն» ենթածրագրով նախատեսված դասընթացներ են իրականացվել շուրջ 100 մասնակից ուսուցիչների համար

«Երիտասարդների կայուն զարգացում» ենթածրագրում համայնքային 5 նախաձեռնություններ շարունակել են իրենց գործունեությունը, 13 նոր ծրագրեր արժանացել են հավանության և մեկնարկել իրականացման գործունեությունը: Քովիդ-19 համավարակը տևական ժամանակ խոչընդոտում էր ծրագրերի ընթացքին, ուստի որոշ նախաձեռնություններ անորոշ ժամանակով դադարեցրին գործունեությունը, կամ հնարավորության դեպքում անցան հեռավար տարբերակին: Հունիս-հուլիս ամիսներին, սակայն, գրեթե բոլոր ծրագրերը վերսկսվեցին՝ հաշվի առնելով հակահամաճարակային կանոնները:

Օգոստոս ամսին կարողությունների զարգացման եռօրյա ճամբար է իրականացվել թվով 30 երիտասարդների համար, որոնք կազմել են իրենց թիմերը՝ համախմբելով սիրիահայ և տեղացի երիտասարդների, մշակել են համայնքի կարիքի վրա հիմնված 26 ծրագրեր, որոնք գնահատման համար ներկայացրել են ընտրական կոմիտեին:

Նոր ծրագրերի գնահատման և արդեն իսկ ընթացիկ 17 ծրագրերի իրականացմանը խոչընդոտեց նաև Ղարաբաղյան հակամարտության սրացումը: Չնայած բոլոր խոչընդոտներին՝ 4 փոքր դրամաշնորհներ ստացած ծրագրեր ավարտեցին իրենց գործունեությունը:

Բոլոր նախաձեռնությունների իրականացմանը ներգրավված են եղել 430 երիտասարդներ:

«ԵՄ հանուն երիտասարդության. Աշխատունակության խթանում»

2018թ. մեկնարկած «ԵՄ հանուն երիտասարդության. Աշխատունակության խթանում» ծրագիրը իրականացվում է ՀՀ Քեղաբքունիքի և Տավուշի մարզերում: Ծրագիրը ֆինանսավորվում է ԵՄ կողմից և իրականացվում Դանիական ԿԽ հետ համագործակցությամբ:

Ծրագրի շրջանակներում Իջևան, Դիլիջան, Սևան և Գավառ բաղաձևերում հիմնված երիտասարդական ակումբներում շարունակաբար իրականացվել են կյանքի և փափուկ հմտությունները (life and soft skills) զարգացնող դասընթացներ/դասընթացաշարեր, նպատակ ունենալով՝ մարզաբնակ, սահմանափակ հնարավորություններով երիտասարդներին կրթել, զարգացնել կարողությունները՝ աշխատաշուկայում մրցունակ լինելու համար:

Այս ծրագրի շրջանակներում 2020 թվականին ՀԿԽԸ-ն իրականացրել է «Մասնագիտական



կողմնորոշում» թեմայով առցանց դասընթացաշար, որին մասնակցել է շուրջ 684 մարզաբնակ երիտասարդ և լայվ դասընթացներ տարբեր ոլորտում հաջողության հասած մասնագետների մասնակցությամբ, այս դասընթացներն ունեցել են շուրջ 19900 դիտում:

Երիտասարդական Դանիական Կարմիր խաչի և ՀԿԽԸ-ի համագործակցության արդյունքում ստեղծվեց և ադապտացվեց «Կյանքի հմտություններ» գրքին համապատասխան առցանց տեսաշար:

2020թ-ին ծրագրի շրջանակներում կազմակերպվեց նաև առցանց «Աշխատանքի տոնավաճառ», որին մասնակցեց շուրջ 70 մարզաբնակ երիտասարդ (Տավուշ և Գեղարքունիք):

2020թ. դեկտեմբեր ամսին կազմակերպվեց «Խթանելով ձեռներեցությունը» թեմայով 3-օրյա

խոհարարություն և այլն: ՀԿԽԸ կամավորների կողմից երիտասարդների համար կազմակերպվել են նաև ինտեգրման և ընդհանուր զարգացվածությունը խթանող հանդիպումներ:

Ժպիտների ակումբ

«Ժպիտների ակումբ» ծրագիրը իրականացվում է Երևանի և Կոտայքի հանրակացարաններում բնակվող երեխաների համար հանրակացարաններում հատուկ կահավորված սենյակում: Ծրագրի հիմնական նպատակն է բարելավել երեխաների կրթական ու զարգացման գործընթացը մշակութային, ինտելեկտուալ և ինտեգրման միջոցառումների միջոցով: Կամավորները ամենօրյա այցեր են իրականացնում, որի ընթացքում կատարում են դասապատրաստումներ, տարբեր խմբակների վարում (անգլերեն, մաթեմատիկա, շախմատ և այլն): Պարապմունքներից զատ կամավորները



ճամբար, որին մասնակցեց 30 երիտասարդ Գեղարքունիքի մարզից:

Կրթական աջակցություն Հայաստանի անտեսված և անապահով պատանիներին և աղքիկներին

«Կրթական աջակցություն Հայաստանի անտեսված և անապահով պատանիներին և աղքիկներին» ծրագիրը Գերմանական ԿԻ Բադեն-Վուլտենբերգի երկրամասային մասնաճյուղի ֆինանսավորմամբ իրականացվում է Արմավիրում և Իջևանում թվով 48 պատանիների համար: Ծրագրի շրջանակներում երիտասարդները մասնակցել են մասնագիտական դասընթացների՝ վարսավիություն, կարուճև,

կազմակերպում են նաև սպորտային և ժամանցային միջոցառումներ: Ամիսը մեկ անգամ երեխաների համար կազմակերպվում են մշակութային միջոցառումներ, այդ թվում այց թատրոն, թանգարան կամ այլ տեսարժան վայրեր: Կամավորները կազմակերպում են տարատեսակ հանդիսություններ ս. Չատկի, Ամանորի, հունիսի 1-ի և այլ տոն օրերին: Զովիդ 19-ը համավարակով պայմանավորված 2020 թվականի մարտ-մայիս ամիսների ընթացքում դադարեցվեցին այցելությունները հանրակացարաններ: Արդեն հունիս ամսվա ընթացքում կամավորները վերսկսվեցին այցերը փոքր խմբերով պահպանելով

հակահամաճարակային բոլոր կանոնները: Սեպտեմբերին երեխաների համար կազմակերպվեց բակային ճամբար, որը ուղղված էր նրանց զարգացմանն ու թիմային աշխատանքի բարձրացմանը:

«Փախստականների պաշտպանություն և տնտեսական ինտեգրում» ծրագրի «Երեխաների կայուն զարգացում» ենթածրագիրը 20 պարապմունքներից բաղկացած դասընթաց է: Այն իրականացվել է վերապատրաստված 150 կամավորների օգնությամբ՝ շուրջ 1460 երեխաների համար, ովքեր Հայաստան են տեղափոխվել Ղարաբաղյան հակամարտության սրացման արդյունքում: Ծրագիրն իրականացվել է հետևյալ մարզերում՝ Կոտայք (Հրազդան, Աբովյան, Չարենցավան), Արարատ (Արտաշատ, Մասիս), Գեղարքունիք (Գավառ, Մարտունի, Վարդենիս), Վայոց Ձոր (Զեյնուկ, Եղեգնաձոր, Վայք), Սյունիք (Գորիս, Սիսիան, Կապան) և Երևան:

20 պարապմունքներից զատ սոցիալական և մշակութային միջոցառումներ ևս իրականացվել են՝ հնարավորություն տալով երեխաներին ավելի լավ ճանաչել համայնքը, ընկերանալ միմյանց հետ:

«Հայաստան, Լեռնային Ղարաբաղ 2020» ծրագրի շրջանակներում վերապատրաստված 60 կամավորներ 600 երեխաների համար իրականացրել են 20 պարապմունքներից բաղկացած դասընթացներ՝ Կոտայքում (Հրազդան, Աբովյան, Չարենցավան), Արարատ (Մասիս և հարակից համայնքներ), Գեղարքունիք (Սևան), Տավուշ (Իջևան, Դիլիջան):

20 պարապմունքներից զատ սոցիալական և մշակութային միջոցառումներ ևս իրականացվել են՝ հնարավորություն տալով երեխաներին ավելի ճանաչել համայնքը, ընկերանալ միմյանց հետ:

Հոգեբանական ծառայություն և Թեժ գիծ

Հոգեկան առողջությունն ունի հիմնաբարային նշանակություն անձի լիարժեք կենսագործունեության, հարմարվողականության, դժվարությունները հաղթահարելու, խնդիրներն արդյունավետ կերպով լուծելու կարողության, առողջ և արդյունավետ փոխհարաբերությունների կառուցման և իհարկե՝ ֆիզիկական առողջության հարցում: Հոգեկան առողջության դերն առավել որոշիչ է դառնում հատկապես արտակարգ իրավիճակներում և դրանցից հետո: Կորոնավիրուսային համավարակի տարածումը ՀՀ-ում և այնուհետև ԼՂ հակամարտության սրացումն առաջ բերեցին նաև հոգեկան առողջության ոլորտին առնչվող մարտահրավերներ մեր ազգաբնակչության շրջանում և մեծ ազդեցություն ունեցան տուժած մարդկանց հոգեկան առողջության և հոգեբանական բարեկեցության

վրա: Այդ համատեքստում Հայկական Կարմիր խաչի ընկերության դերը հանրապետությունում առանցքային էր բնակչության կարիքների համաժամակյա արձագանքելու գործընթացում՝ տրամադրելով հոգեկան առողջությանն ուղղված և սոցիալ-հոգեբանական աջակցության ծառայություններ:

Հաշվի առնելով համավարակով, ինչպես նաև հակամարտության սրացմամբ պայմանավորված սոցիալ-հոգեբանական դժվարությունները, երկրում առկա սոցիալ-տնտեսական խնդիրները, տեղահանման հետևանքով առաջացած հոգեբանական խնդիրներն ու բարդությունները՝ հոգեկան առողջությանն ուղղված և սոցիալ-հոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրումը դարձել է Հայկական Կարմիր խաչի ընկերության գործունեության առաջնահերթ և կարևոր ուղղություններից մեկը:

Հայկական Կարմիր խաչի ընկերության սոցիալ-հոգեբանական աջակցության կենտրոնի հոգեբանները հանրապետության հիվանդանոցներում տրամադրել են հոգեբանական առաջին օգնություն և հոգեբանական աջակցություն զինվորներին, նրանց ընտանիքի անդամներին, անհայտ կորած, գերեզարկված անձանց ընտանիքի անդամներին, պատերազմական գործողությունների մասնակցած անձանց:

Մեր փորձը ցույց տվեց, որ արտակարգ իրավիճակից տուժած ազգաբնակչությանը ժամանակին և արհեստավարժ կերպով սոցիալ-հոգեբանական աջակցության տրամադրումը կանխարգելում է հոգեկան առողջությանն առնչվող հետագա բարդությունները և առավել ծանր խնդիրները, օգնում անձին ամրապնդելու իր ունեցած հոգեկան ռեսուրսները և նոր, առավել կայուն ռեսուրսներ ձեռք բերելու՝ իրավիճակի հետևանքները դրական ելքով հաղթահարելու համար:

ՀԿԽԸ-ն ընդգծում է խնդրի հրատապության կարևորությունը և շարունակում է հոգեկան առողջության և սոցիալ-հոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման իրականացումը ինչպես առկա, այնպես էլ հեռավար եղանակով՝ իրավիճակի բացասական ազդեցությունը կրած անձանց հնարավորություն ընձեռնելով զանգահարել սոցիալ-հոգեբանական աջակցության թեժ գիծ և հոգեբանական առաջին օգնություն ստանալ կենտրոնի հոգեբանների կողմից:

2020 թվականի օգոստոս և սեպտեմբեր ամիսներին Հայկական Կարմիր խաչի ընկերությունն իրականացրել է «Հոգեբանական առաջին օգնության կարողությունների զարգացում



Քովիդ-19 համավարակի պայմաններում» ծրագիր՝ «Վայոց Ձորի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի սահմանամերձ համայնքների անվտանգության և դիմակայունության հզորացում» ծրագրի շրջանակներում՝ Բրիտանական Կառավարության, ՀՀ կառավարության, ՅՈՒՆԻՍԵՖ-ի և ՄԱԿ-ի Չարգացման գործակալության համագործակցությամբ:

Ծրագրի շրջանակներում Վայոց Ձորի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի սահմանամերձ համայնքների դպրոցների ուսուցիչների համար անցակցվել են «Հոգեբանական առաջին օգնություն Քովիդ-19 համավարակի պայմաններում» թեմայով վերապատրաստման առցանց դասընթացներ, մշակվել է հոգեբանական առաջին օգնության ուղեցույց՝ նախատեսված ուսուցիչների, ծնողների,

հոգեբանական բաղադրիչի շրջանակներում, ՀՀ-ում իրականացրել է սոցիալ-հոգեբանական ոլորտին ուղղված ակտիվ գործունեություն:

ՀԿԻՇ սոցիալ-հոգեբանական աջակցության կենտրոնի մասնագիտական թիմի կողմից իրականացվել է իրավիճակի նախնական գնահատում և տեղահանվածների քարտեզագրում՝ բաղաբաբետարանների հետ սերտ համագործակցությամբ: Գնահատման արդյունքների հիման վրա՝ ապաստարաններում տեղակայված Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձանց տրամադրվել են սոցիալ-հոգեբանական հետևյալ ծառայությունները:

- Հոգեբանական խմբային հանդիպումներ, որտեղ մասնակիցները հնարավորություն են ունեցել կիսելու իրենց մտահոգությունները,



երեխաների հետ աշխատող տարբեր ոլորտների մասնագետների համար:

Հոգեբանական առաջին օգնության կարողությունների զարգացման վերապատրաստում են անցել վերոնշյալ սահմանամերձ համայնքների 72 ուսուցիչ:

Ղարաբաղյան հակամարտության սրացման հետևանքով, տեղահանված բնակչությանն աջակցելու նպատակով, 2020թ.-ի նոյեմբեր ամսին ՀԿԻՇ-ն ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գրասենյակի հետ սերտ համագործակցությամբ՝ «Փախստականների պաշտպանության և տնտեսական ինտեգրում» ծրագրի սոցիալ-

դժվարություններն ու խնդիրները անվտանգ միջավայրում: Թվով 2180 անձ ընգրկված է եղել խմբային հոգեբանական աշխատանքներում:

- Հոգեբանական կրթություն, որն իր մեջ ներառում է սթրեսի, սթրեսի հաղթահարման և հարմարվողականության մեխանիզմների, կայունության բարձրացման, ինքնօգնության խորհուրդների, ինչպես նաև նոր միջավայրում կյանքի և ինքնասպասարկման հմտությունների վերաբերյալ տեղեկտվության տրամադրում:
- Կարիքահեն անհատական հոգեբանական խորհրդատվություններ: Տրամադրված անհատական հոգեբանական

ծառայությունների թիվը կազմել է 156:

- Ուղղորդում այլ մասնագիտացված ծառայությունների՝ այլ հոգեկան առողջության հետ կապված խնդիրների դեպքում:
- Տեղեկատվություն տրամադրում կրթական, սոցիալական, բժշկական, ֆինանսական և այլ հարցերի վերաբերյալ ծառայությունների վերաբերյալ:
- Մասնագիտացված հոգեբանների կողմից թեժ գծերի վարում. կարիքների գնահատում,

իրականացվել է սերտորեն համագործակցելով տեղական ինքնակառավարման մարմինների, հատկապես՝ մարզպետարանի և քաղաքապետարանի սոցիալական հարցերի բաժինների հետ: Հայկական Կարմիր խաչի ընկերության նախաձեռնությամբ միացել են և իրենց աջակցությունն են ցուցաբերում նաև տեղական ինքնակառավարման մարմիններն ու մասնավոր սեկտորը՝ Մասիս քաղաքապետարանն աջակցել է տարածքի վերանորոգմանը, որն անվարձահատույց տրամադրվել էր մասնավոր



առցանց հոգեբանական առաջին օգնության տրամադրում և անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրում և ուղղորդում այլ ծառայությունների:

Բարեգործական ճաշարան Մասիսում

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը՝ Շվեյցարական Կարմիր խաչի աջակցությամբ, 2017թ. հուլիսից բարեգործական ճաշարան գործարկեց Արարատի մարզի Մասիս քաղաքում: Այս նախաձեռնության շնորհիվ 85 տարեցներ ոչ միայն ապահովված են տաք, սննդարար ճաշով և հնարավորություն ունեն ամեն օր շփվել միմյանց հետ, այլև շրջապատված են ՀԿԽԸ կամավորների ու անձնակազմի ջերմությամբ ու հոգատարությամբ: Շահառուներն ընտրվել են հստակ որոշված կարիքների և մշակված չափանիշների հիման վրա: Գործընթացն

անձի կողմից, «Ապարան» ջրի գործարանի կողմից տրամադրվում է խմելու ջուր, «Վեգա» ընկերության կողմից՝ կենցաղային տեխնիկա:

Գյումրու շուրջօրյա խնամքի կենտրոն

Մայիսի 1-ից Հայկական Կարմիր խաչի ընկերությունը (ՀԿԽԸ)՝ ՀՀ Կառավարության որոշմամբ ստանձնեց Գյումրու տուն-ինտերնատի կառավարումը: Այն այսուհետ կոչվում է Հայկական Կարմիր խաչի ընկերության Գյումրու շուրջօրյա խնամքի կենտրոն:

ՀԿԽԸ-ն վերակնքել է աշխատանքային պայմանագրերը կենտրոնի աշխատակազմի 92 տոկոսի հետ: Մայիսի 1-ից կենտրոնում սահմանվել է շուրջօրյա հերթափոխ, այսուհետ կենտրոնի 6 մասնաշենքերից յուրաքանչյուրն ունի շուրջօրյա խնամող:

ՏԱՐԵԿՐ 2020



Քովիդ-19-ի համավարակով պայմանավորված՝ շահառուների ելումուտը սահմանափակելու նպատակով մայիսի 14-ին կազմակերպվել է սրտաբանի, վնասվածքաբանի և ակնաբույժի այց ինսամֆի կենտրոն: Իրականացվել է 42 շահառուի զննում և խորհրդատվություն:

Հիմք ընդունելով համավարակային իրավիճակը՝ Գյումրու շուրջօրյա ինսամֆի կենտրոնը մայիսի 21-ից անցել է աշխատանքային փակ ռեժիմի: Շուրջօրյա հերթապահում են 6 ինսամոդ,

նախաձեռնությունը շատ կարևոր է ինսամառուների կյանքի որակի բարելավման՝ առողջականից մինչև հոգեբանական ամրություն հաղորդելու տեսանկյունից:

Կենտրոնի անձնակազմը և շահառուները պարբերաբար անցնում են Քովիդ-19-ի թեստավորում. արդյունքները բացասական են:

Ինսամառուները մեկուսացման մեջ էին դեռևս մարտի 16-ից: Ամեն շաբաթ կենտրոնի տարածքը



2 բուժքույր, 2 մատուցող, խոհանոցի աշխատողը և կաթսայատան պատասխանատուն:

Գյումրու շուրջօրյա ինսամֆի կենտրոնում կյանքի է կոչվել «Իմ քայլը» հիմնադրամի տարեցների ատամնաբուժական խնդիրների լուծմանն ուղղված աջակցության ծրագիրը: Հիմնադրամի ֆինանսավորման շնորհիվ հունիս ամսից հնարավորություն ունենք կենտրոնի ինսամառուներին մատուցելու ատամնաբուժական ծառայություններ (բուժում, պրոթեզավորում և օժանդակ այլ միջամտություններ):

Ծառայությունների մատուցումն իրականացնում է «Եվրոդենտ» հետբուժական կրթական կենտրոնը, որը տեղում հատուկ ինսամառուների համար կազմակերպել է ժամանակավոր ատամնաբուժական սենյակ: Այս

ախտահանվում է Հայկական Կարմիր խաչի ընկերության կամավորների կողմից, անձակազմն ու ինսամառուները ապահովված են անհրաժեշտ պաշտպանիչ բոլոր միջոցներով:

2020 թ.-ի սեպտեմբերին մեկնարկել է «Աշխատելով միասին հանուն որակյալ ինսամֆի, բարեկեցության և արժանապատիվ կյանքի» ծրագիրը, որն իրականացվում է Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից՝ Ավստրիական Կարմիր խաչի հետ համագործակցությամբ և Ավստրիական զարգացման ֆինանսավորմամբ:

Ծրագրի նպատակն է բարելավել ՀԿԽԸ Գյումրու շուրջօրյա ինսամֆի կենտրոնի բնակիչների ինտեգրացված ինսամֆի և սոցիալական ծառայությունների որակը:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ, ԿԱՄԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ



Երիտասարդական Կարմիր խաչը (ԵԿԽ) Հայկական Կարմիր խաչի ընկերության շրջանակներում գործող կամավոր անդամների երիտասարդական միավորում է, որը հիմնադրվել է 1992թ. նոյեմբերի 3-ին: Այն գործում է ՀԿԽԸ բոլոր մարզային և տարածքային մասնաճյուղերում և գործունեություն է ծավալում հետևյալ ոլորտներում.

1. Սոցիալական աջակցություն

- իրականացնում է սոցիալ-հոգեբանական աջակցության ծրագրեր ուղղված հանրակացարանաբնակ միայնակ ծերերին, ծնողազուրկ, փախստական և անապահով ընտանիքների երեխաներին

2. Առողջապահություն

- կազմակերպում է բազմաբնույթ հանրային միջոցառումներ ու առողջ ապրելակերպի թեմաներով դասընթացներ ուսումնական հաստատություններում

3. Միջազգային համագործակցություն

- իրականացնում է երիտասարդ կամավորների փոխանակում Բրիտանական և Գերմանական Կարմիր խաչերի հետ «Եվրոպական կամավորական ծառայություն» ծրագրի շրջանակներում
- կազմակերպում և մասնակցում է միջազգային հավաքների, ճամբարների, սեմինարների, թրեյնինգների

4. Մարդասիրական արժեքների լուսաբանում

- կազմակերպում է Կարմիր խաչի գաղափարների լուսաբանում դպրոցներում և բուհերում
- նպաստում է կամավորական շարժման խթանմանը, կամավորների հավաքագրմանն ու ՅԿԽԸ գործունեության մեջ ներգրավմանը



ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՏԱՐԱԾՈՒՄ



Մենք շարունակաբար աշխատանք ենք տանում մարդասիրական արժեքների տարածման, Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժման, Հիմնարար սկզբունքների, Միջազգային մարդասիրական իրավունքի, խորհրդանշանի գործածության և չարաշահման, մեր գործունեության ու առաքելության վերաբերյալ իրազեկության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ:

2020 թվականին, Զովիդ – 19 համավարակով պայմանավորված, չեղարկվեցին ՀԿԽԸ 100-ամյակին նվիրված միջոցառումը, բոլոր լուսաբանման դասընթացներն ու հանրային միջոցառումները, որոնց փոխարեն անցակցվեցին իրազեկման ակցիաներ:

Զովիդ-19. Ռիսկի հաղորդակցություն և հանրային իրազեկում

Մարտի 16-ից՝ Զովիդ-19 համավարակի հայտարարման առաջին իսկ օրվանից, ՀԿԽԸ

կողմից հավաքագրված և պատրաստված շուրջ 1500 կամավորները պարբերաբար Հայաստանի քաղաքային և գյուղական համայնքներում տարածել են տեղեկատվական թերթիկներ և բնակչության շրջանում իրականացրել իրազեկման աշխատանքներ: Վարակից պաշտպանվելու վերաբերյալ իրազեկող թերթիկները շահառուներին են տրամադրվել նաև մարդասիրական օգնության փաթեթի հետ միասին, տրվել են նաև մարզպետարաններին և ՏԻՄ-երին, գործընկեր կազմակերպություններին:

Հաշվի առնելով Հայաստանում Զովիդ-19 համավարակի տարածման շարունակական աճը, ՀՀ Վարչապետի աշխատակազմի հետ համագործակցությամբ և խորհրդակցությունների արդյունքում, Հայկական Կարմիր խաչի ընկերությունը (ՀԿԽԸ) հանրային իրազեկման քարոզարշավ սկսեց՝ հանրապետության ամբողջ տարածքում, հատկապես ուշադրության կենտրոնում պահելով բակերը և հարակից

ՏԱՐԵԳԻՐ 2020



վայրերը, որտեղ մարդիկ չէին կրում դիմակներ և չէին պահպանում սոցիալական հեռավորություն:

Յունիսի 15-ից Հայկական Կարմիր խաչի ընկերության կամավորները շրջում էին մարդաշատ տարածքներում, բակերում և հանրային տրանսպորտում՝ բաժանելով իրազեկման թերթիկներ, բնակչությանը կրկին հիշեցնելով դիմակներ կրելու, սոցիալական հեռավորություն պահելու, Քովիդ-19 վարակից պաշտպանվելու կանոնները պահպանելու կարևորության մասին, տրամադրելով դիմակ և ձեռնոց, նաև՝ ակոգել: ՀԿԽԸ կամավորները իրազեկող թռուցիկներ, պաստառներ էին փակցնում շքամուտքերում,

զգոնությունը թուլանում է և անհրաժեշտ է իրազեկման տարբեր ձևաչափեր կիրառել:

Մարտի 16-ից տարածվել է ավելի քան 500 000 տպագիր տեղեկատվական նյութ: Նույն նյութերը տարածվել են նաև առցանց տարբերակով՝ ՀԿԽԸ սոցիալական մեդիայի էջերի միջոցով: Ռիսկի հաղորդակցման բոլոր նյութերն ու համայնքների ներգրավման ռազմավարությունները հաշվի են առնում ընտանեկան բռնության և երեխաների պաշտպանության հարցերը, հաշմանդամություն ունեցող անձանց և փախստականների հետ աշխատանքի նրբությունները՝ հաշվի առնելով միջերևույթի ու ապատեղեկատվությունը, որպեսզի



զովագրային տախտակների, սյունների, մեքենաների վրա, Մետրոպոլիտենում:

Իրազեկման արշավն իրականացվել է Երևանի բոլոր վարչական շրջաններում և մարզերում, բաժանվել է 460 160 պաշտպանիչ միջոց՝ դիմակ, ձեռնոց և ակոգել:

Հունիսի 3-ից Երևանում, իսկ 9-ից՝ մինչև հուլիսի 15-ը մարզկենտրոններում ժամը 17:00-ից 20:00-ը գործում էին տեղեկատվական տաղավարներ, որտեղ Հայկական Կարմիր խաչի ընկերության կամավորները հանրությանն իրազեկում էին Քովիդ-19 վարակից պաշտպանվելու վարքականոնների մասին, տրամադրում դիմակ, ձեռնոց և ակոգել:

Արշավի նպատակն էր հանրության ուշադրության կենտրոնում պահել անվտանգ վարվելակերպի կանոնների պահպանման կարևորությունը, քանի որ արդեն 3 ամսից ավելի շարունակվող համավարակի պայմաններում մարդկանց

ռիսկի հաղորդակցման հետագա մոտեցումները ձևավորվեն դրանց համապատասխան: Նյութերի բովանդակությունը մշակվել է՝ ըստ Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի և Առողջապահության համաշխարհային կազմակերպության խորհուրդների:

2020 թվականին Քովիդ-19 համավարակին և Ղարաբաղյան հակամարտության սրացման հետևանքներին ՀԿԽԸ արծազանքը լուսաբանելու նպատակով համագործակցել ենք մայրաքաղաքի և մարզային լրատվամիջոցների հետ, պատրաստել ենք 2 ֆիլմ և 9 հոլովակ:

ՀԿԽԸ 100-ամյակի կապակցությամբ՝ «Նյումեգ» հրատարակչության հետ համագործակցությամբ տպագրվեց «Հարյուր տարվա մարդասիրություն. Հայկական Կարմիր խաչի ընկերությունը 1920-ից ի վեր» գիրքը, պատրաստվեց ֆիլմ՝ ՀԿԽԸ 100-ամյա գործունեության մասին, ստեղծվեցին 100-ամյակին նվիրված արծաթյա և բրոնզե հուշամեդալներ:



Համագործակցության հուշագիր՝ Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնի հետ

Հայկական Կարմիր խաչի ընկերությունն իր գործունեության ընթացքում մշտապես համագործակցում է Կարմիր խաչի և Կարմիր մահիկի (ԿԽ և ԿՄ) միջազգային շարժման բոլոր բաղկացուցիչների,

Կառավարության, միջազգային և տեղական՝ մասնավոր ու հասարակական կազմակերպությունների հետ:

**Համագործակցության հուշագիր՝
Ռուս-հայկական մարդասիրական
արձագանքման կենտրոնի հետ**

Հունվարի 31-ին Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) Կենտրոնական գրասենյակում Համագործակցության հուշագիր ստորագրվեց ՀԿԽԸ և «Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնի» միջև:

Ըստ համաձայնագրի՝ կողմերը կհամագործակցեն բնակչության և համայնքների պաշտպանության ոլորտում կադրերի վերապատրաստման առավել արդյունավետ համակարգի ստեղծման

ուղղությամբ, կաշխատեն նոր ուսումնական ծրագրերի՝ դասընթացների, սեմինարների, գիտական հետազոտությունների մշակման ու իրականացման ուղղությամբ:

**ՀԿԽԸ գլխավոր քարտուղար
Աննա Եղիազարյանն իր խոսքում նշեց.**

- Մեր համագործակցությունը, որ սկսվել է դեռ երկու տարի առաջ, շատ արդյունավետ է եղել, և այսօր մենք պատրաստ ենք նոր մակարդակի բարձրացնել մեր համագործակցությունը: Մենք արդեն 100 տարի է, ինչ աշխատում ենք երկրում, և մեծ փորձ ունենք և աղետների կառավարման, և կռաջին օգնության, և արտակարգ իրավիճակներին նախապատրաստվածության և արձագանքման ոլորտում:

Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնի տնօրեն Յուրի Պոլեչուկն ասաց, որ հաճույքով են համագործակցել Հայկական Կարմիր խաչի ընկերության հետ և պատրաստ են խորացնելու համագործակցությունը:



- Մեր կազմակերպությունը 30 տարվա փորձ ունի, և շատ ուրախ կլինենք համատեղելու մեր ջանքերը՝ աղետների և արտակարգ իրավիճակների դեպքում տուժած բնակչությանն առավել արդյունավետ օգնելու համար:

ԿԻՄԿ և ԿԻՄՖ տարածաշրջանային տնօրենները՝ Երևանում

Դեկտեմբերի 3-ին Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԻՄԸ) գլխավոր քարտուղար Աննա Եղիազարյանը հանդիպեց Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԻՄԿ) Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային տնօրեն Մարտին Շյուպի և Կարմիր խաչի և

Ազգային ընկերությունն այս օրերին զգացել է մեր գործընկերների՝ Կարմիր խաչի ընտանիքի աջակցությունը, որի շնորհիվ հնարավոր է դարձել այս օրերին մեր մարդասիրական արձագանքը: Շուտով Հայաստանում կունենանք նաև ԿԻՄՖ պատվիրակություն, ինչն ավելի սերտ կդարձնի մեր համագործակցությունը՝ ի շահ մեր շահառուների, - ողջունելով հյուրերին նշեց գլխավոր քարտուղար Աննա Եղիազարյանը:

ԿԻՄԿ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային տնօրեն Մարտին Շյուպն ասաց, որ ողջունելի է, որ ակտիվ մարտական գործողությունները դադարել են, և այժմ Կարմիր խաչը պետք է կենտրոնանա իր մարդասիրական



ԿԻՄԿ և ԿԻՄՖ տարածաշրջանային տնօրենները՝ Երևանում, 12.2020

Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի (ԿԻՄՖ) Եվրոպայի տարածաշրջանային տնօրեն Բրիգիտ Բիշոֆ Էբեսենի պատվիրակություններին հետ:

Հանդիպման նպատակն էր քննարկել Ղարաբաղյան հակամարտության սրացման հետևանքով երկրում առաջացած մարդասիրական խնդիրները և համատեղ արձագանքի համակարգման աշխատանքները:

- Այսպիսի ծանր, մարտահրավերներով լի տարի դեռևս չէինք ունեցել: Հայկական Կարմիր խաչի ընկերության դերը երկրում ամրագրված է: Մեր կազմակերպությունն իր մարդկային ռեսուրսներով և հաշվետվողականության թափանցիկ համակարգի շնորհիվ վստահելի գործընկեր է Կառավարության և այլ գործընկերների համար:

առաքելությունը լիարժեքորեն իրականացնելու վրա:

- Տարբեր հանդիպումների ժամանակ զգացել եմ, որ ՀՀ Կառավարությունը վստահում է Ազգային ընկերությանը, շնորհակալ ենք այս ընթացքում իրականացված մեծ աշխատանքի համար: Հիմա պետք է մտածենք, թե ինչպես համակարգենք մեր աշխատանքը, կորոդիկացնենք մեխանիզմներ մշակենք, որպեսզի մեր՝ որպես Շարժման բաղկացուցիչներ, աշխատանքն առավել արդյունավետ լինի, -

ԿԻՄՖ Եվրոպայի տարածաշրջանային տնօրեն Բրիգիտ Բիշոֆ Էբեսենը նույնպես նշեց համակարգված աշխատելու կարևորությունը.

- Որպես Կարմիր խաչի ընտանիքի անդամ այսօր թիմ ունենք երկրում, որը համագործակցում է

ՀԿԽԸ-ի հետ: Մենք տեսնում ենք, որ Հայկական Կարմիր խաչի ընկերությունն այս տարվա ընթացքում հսկայական աշխատանքն է կատարել, և հիմա էլ, պատերազմի հետևանքներին զուգահեռ, Քովիդ – 19-ը նույնպես չի հեռացել և համավարակի վտանգն առկա է: Մենք այստեղ ենք վերահաստատելու մեր աջակցությունը՝ համակարգված աշխատելով արձագանքելու խոցելի խմբերի մարդասիրական կարիքներին - ասաց նա:

Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժման գործընկերների և միջազգային ու

Նպատակն է մարդասիրական աջակցություն տրամադրել առավել խոցելի սիրիահայերին, մասնավորապես՝ ֆինանսապես աջակցել անհետաձգելի թանկարժեք առողջապահական ծառայությունների կարիք ունեցող ընտանիքներին:

Հուլիսի շրջանակներում ՀԿԽԸ-ն 25 500 ԱՄՆ դոլարի աջակցություն կտրամադրի նշված առողջապահական ծառայությունները կազմակերպելու համար, իսկ ՀԲԸՄ-ն կապահովի շահառուների առաջին բուժօգնության տրամադրումը և հետագա բժշկական կարիքների



Պատերազմի պայթուցիկ մնացորդների եվ ականների վտանգի իրազեկման ծրագրի Հայաստանի Հանրապետությունում ծրագրի ստորագրումը, 06.2020

տեղական կազմակերպությունների կողմից ավելի քան 3 100 000 ԱՄՆ դոլար է տրամադրվել Հայկական Կարմիր խաչի ընկերությանը՝ Ղարաբաղյան հակամարտության սրացման հետևանքով Հայաստան տեղափոխված անձանց ամենահրատապ ու անհետաձգելի կարիքներին արձագանքելու համար:

**Համագործակցության հուլիսի
Հայկական Կարմիր խաչի ընկերության և
Հայկական բարեգործական ընդհանուր
միության միջև**

Հունիսի 22-ին Հայկական Կարմիր խաչի ընկերությունը (ՀԿԽԸ) և Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ) ստորագրեցին համագործակցության հուլիսի ծրագրի «Սիրիահայ փախստականների աջակցություն» ծրագրի առողջապահական բաղադրիչի համատեղ իրականացման նպատակով:

գնահատումը ՀԲԸՄ-Քլոտեա Նազարեան բժշկական կենտրոնում:

- Հայկական Կարմիր խաչի ընկերությունը սիրիահայերի մարդասիրական կարիքներին արձագանքել է նրանց ժամանման առաջին իսկ օրվանից՝ 2012 թվականից: Այդ աջակցությունը եղել է բազմաթիվ իրավական խորհրդատվությունից և մարդասիրական օգնության տրամադրումից մինչև սեփական բիզնես հիմնելու հնարավորության ստեղծում և զարգացում: Ուրախ եմ, որ այս ծրագրի շնորհիվ կարող ենք սիրիահայերին աջակցել նաև առողջապահական ծառայություններ ստանալու ոլորտում, քանի որ դրա կարիքը շատ մեծ է, - ասաց ՀԿԽԸ գլխավոր քարտուղար Աննա Եղիազարյանը:

- Սիրիական ճգնաժամի առաջին իսկ օրվանից ՀԲԸՄ-ն սիրիահայերի աջակցությանն ուղղված մարդասիրական, սոցիալական, կրթական ու

ՏՐԵՒՆԵՐ 2020





ՀՀ-ում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Ն.Գ. տիկին Լին Թրեյսին և Հայկական Կարմիր խաչի գլխավոր քարտուղար Աննա Եղիազարյանը հետևում էին մարդասիրական օգնության կազմակերպման աշխատանքներին:

առողջապահական լայնածավալ ծրագրեր է իրագործել հենց Սիրիայում, այլ երկրներում, ինչպես նաև՝ Հայաստանում: Սիրիահայ հարյուրավոր երիտասարդներ, ովքեր իրենց բարձրագույն կրթությունն ստանում են Հայաստանում, անցնող տարիներին օտվել են ուսումնական վարձավճարների փոխհատուցման մեր ծրագրից: Սիրիահայ կարիքավոր ընտանիքներին ցուցաբերվում է սոցիալական ու առողջապահական տարաբնույթ օգնություններ: Հազարավոր սիրիահայեր օգտվում են ՀԲԸՄ Քլոտեա Նագարեան բժշկական կենտրոնի ծառայություններից, իսկ վիրահատական անհետաձգելի միջամտությունների, ծանր հիվանդությունների բուժման պարագայում՝ մասնակիորեն փոխհատուցվում են ծախսերը: Ծրագրերի իրականացման գործընթացում մենք չափազանց կարևորում ենք համագործակցության ընդլայնումը միջազգային կազմակերպությունների ու կառույցների հետ, որոնց հետ համատեղ աշխատելու մեր փորձն արդյունավետորեն ծառայում է ճգնաժամային իրավիճակում հայտնված մարդկանց կարիքների բավարարմանը: Այս տեսակետից մեծապես կարևորում են այս համագործակցությունը ՀԿԽԸ-ի հետ, - ասաց ՀԲԸՄ Հայաստանի նախագահ Վազգեն Յագուբյանը:

«Սիրիահայ փախստականների աջակցություն» ծրագիրը, որի մեկնարկը տրվել էր 2019 թվականի նոյեմբերի 1-ից, շարունակվելու է մինչև 2020

թվականի հոկտեմբերի 31-ը: Նպատակն է բարելավել Հայաստանում սիրիացի փախստականների բարեկեցությունը՝ ապահովելով մարդասիրական աջակցություն և կրթության հասանելիություն՝ առավել խոցելի ընտանիքներին:

ԱՄՆ կառավարությունն աջակցում է Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային ֆեդերացիային և Հայկական Կարմիր խաչի ընկերությանը՝ արձագանքելու Քովիդ - 19 համավարակին

Մայիսի 19-ին, ՀՀ-ում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Ն.Գ. տիկին Լին Թրեյսին և Հայկական Կարմիր խաչի գլխավոր քարտուղար Աննա Եղիազարյանը ներկա էին ՀՀ մարզեր ուղարկվող մարդասիրական օգնության տեսակավորման և փաթեթավորման աշխատանքներին: Նրանք տեղում շփվեցին կամավորների և անձնակազմի հետ, տեսակապով միացան մարզային մասնաճյուղի կամավորների և անձնակազմի, ինչպես նաև Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային ֆեդերացիայի Հարավային Կովկասի պատվիրակության ղեկավար Օլգա Ջումաեվայի հետ:

Խոցելի խմբերի սոցիալական վիճակի վրա Covid-19 համավարակի ազդեցությունը հնարավորինս մեղմելու նպատակով՝ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ Հայաստանի մարզերում բնակվող 8022 միայնակ և անժառանգ տարեցներ, հաշմանդամություն

ունեցող անձինք և առավել խոցելի ընտանիքներ մայիս ամսվա ընթացքում Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից ստանում են մեկ ամսվա համար նախատեսված սննդի և հիգիենիկ պարագաների փաթեթներ:

Փաթեթները, որոնք կազմված են՝ հիմնվելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից տրամադրված մեկ մարդու համար նվազագույն զամբյուղի հաշվարկի վրա, ՀԿԽԸ կամավորները հասցնում են շահառուների տներ:

Մարդասիրական օգնություն Շիրակի մարզին՝ ԵՄ աջակցությամբ

Հայաստանում ԵՄ պատվիրակության աջակցությամբ 2020 թվականի մայիսին հնարավորություն ունեցանք օգնելու մոտ 1800

Մարդասիրական օգնություն «Իգմիրան բարեգործական հիմնադրամ»-ի աջակցությամբ

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը, Քովիդ-19 համավարակի տնտեսական հետևանքները մեղմելու նպատակով արտակարգ դրության առաջին իսկ օրերից աջակցում է առավել խոցելի ընտանիքներին՝ տրամադրելով սննդի և հիգիենիկ պարագաների մեկ ամսվա համար նախատեսված փաթեթ:

Հունիս ամսվա ընթացքում Իգմիրյան բարեգործական հիմնադրամի աջակցությամբ հնարավորություն ունեցանք աջակցելու Արմավիրի (592) և Լոռու (555) մարզերի բազմազավակ 1147 ընտանիքի:

Շահառուների ցուցակը տրամադրվել էր ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի



ՀՀ-ում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Ն.Գ. տիկին Լին Թրեյսին և Հայկական Կարմիր խաչի գլխավոր քարտուղար Աննա Եղիազարյանը հետևում էին մարդասիրական օգնության կազմակերպման աշխատանքներին:

տարեցների և խոցելի անձանց: Նրանց տրամադրվեցին սնունդ և հիգիենիկ պարագաներ՝ Քովիդ-19-ի սոցիալական հետևանքները փոքր-ինչ մեղմելու համար:

ԵՄ դեսպան Անդրեա Վիկտորինը ներկա էր Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից մարդասիրական օգնության փաթեթավորմանը, որը Շիրակի մարզ ուղարկվեց նույն օրը:

Նախարարության կողմից: Համագործակցել ենք նաև Արմավիրի և Գուգարաց թեմերի ներկայացուցիչների հետ, որոնք տրամադրել են առավել խոցելի ևս 23 շահառու ընտանիքների տվյալներ:

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը և HSBC Հայաստանը համատեղ ծրագրի միջոցով արձագանքեցին Քովիդ-19 համավարակի

ՏԱՐԵԳՐ 2020



արդյունքում ստեղծված տնտեսական հետևանքներին

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը «Եյչ-Ես-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի (HSBC Հայաստան) ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Արձագանքման միջոցառումներ Բուվիդ-19-ին» ծրագրի շրջանակներում 2020թ. հուլիս-օգոստոս ամիսներին Գեղարքունիքի մարզի 32 ընտանիքների տրամադրեց աջակցություն, ինչը վերջիններիս կընձեռնի տնտեսական գործունեություն ծավալելու արդյունքում որոշակի եկամուտ ստեղծելու և երկարաժամկետ կտրվածքով կենսապահովման խնդիրները հաղթահարելու հնարավորություն:

ՀԿԽԸ-ն մի շարք միջազգային ցանցերի և աշխատանքային խմբերի անդամ է, ինչպիսիք են՝ Փախստականների, ապաստան հայցողների և միգրանտների հարցերով Եվրոպական Կարմիր խաչի ընկերությունների համագործակցության հարթակը, Եվրոպական Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների սոցիալ-հոգեբանական աջակցության ցանցը, Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի երիտասարդական հանձնաժողովը, հատուկ կարիքներով Փախստականների կարիքների գնահատման ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի աշխատանքային խումբը, Առաջին օգնության Եվրոպական



ԵՄ դեսպան Անդրեա Վիկտորինը և Հայկական Կարմիր խաչի ընկերության գլխավոր քարտուղար Աննա Եղիազարյանը հետևում էին մարդասիրական օգնության կազմակերպման աշխատանքներին:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Գեղարքունիքի մարզպետարանի հետ համագործակցության արդյունքում Գեղարքունիքի մարզի տարբեր համայնքներում բնակվող խոցելի ընտանիքների ճիշտացման և/կամ բնափոխման եկամուտների ապահովման նպատակով իրականացվեց կարիքների, կարողությունների և ռեսուրսների գնահատում:

Արդյունքում 28 ընտանիքներ անասնապահությամբ զբաղվելու համար ստացան խոշոր և մանր եղջերավոր կենդանիներ, թռչուններ, 3 ընտանիք՝ գյուղատնտեսությամբ զբաղվելու համար գյուղտնիսկիկ և 1 ընտանիք՝ կարունձնով զբաղվելու տեխնիկա:

խորհրդատվական Կենտրոնը, Կարմիր խաչի և Կարմիր մահիկի Եվրոպական համակարգման կոմիտեն, ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ ուղղված միջոցառումները համակարգող հանձնաժողով (ՄՀՀ):

Եվրոպական Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և Տուբերկուլյոզի համացանցը, Կամավորության զարգացման Եվրոպական ցանցը, Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովը, ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին կից հասարակական խորհուրդը, Տարեցների սոցիալական պաշտպանության և խնամքի տրամադրման հիմնախնդիրներով զբաղվող կառույցների ցանցը, ՄԱԿ-ի Աղետների կառավարման երկրի թիմը, ԱՌՆԱԴ-ը:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ



Հայկական Կարմիր խաչի ընկերության Նախագահության նիստ

Հայկական Կարմիր խաչի ընկերության զարգացման առաջնահերթ ուղղությունները երկուսն են.

- Ամրապնդել և հզորացնել մարզային և համայնքային մասնաճյուղերի կարողությունները՝ համայնքներին բարելավված ու շարունակական ծառայություններ մատուցելու և արտակարգ իրավիճակներին արագ արձագանքմանը պատրաստ լինելու համար
- Բարելավել ֆինանսական ռեսուրսների մոբիլիզացման և հաղորդակցության կարողությունները՝ արտաքին դոնորներից կախվածության նվազեցման և ծառայությունների ֆինանսական կայունության ապահովման համար տեղի նվիրատուների հետ երկարատև համագործակցություն հաստատելու միջոցով:

Մասնաճյուղերի զարգացում. Տավուշի, Գեղարքունիքի, Սյունիքի և Վայոց Ձորի մարզային մասնաճյուղերի կարողությունների զարգացում

Համագործակցելով ԿԽՄԿ-ի հետ՝ Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզային մասնաճյուղերում շարունակվել է կարիքների հիման վրա կարողությունների զարգացման գործընթացը: Մասնավորապես, բարելավվել են ՄՄ անձնակազմի և կամավորների հմտությունները՝ կարիքների

գնահատման, ծրագրերի կառավարման և ռեսուրսների մոբիլիզացման ուղղություններով: Մարզային մասնաճյուղերի զարգացման ծրագրերի շրջանակներում մարզային կամավորների կողմից մշակվել և ներկայացվել են կամավորական Նախաձեռնություններ, որոնցից ամենահաջողվածները ֆինանսական աջակցություն են ստացել՝ համալրելով տեղական ռեսուրսներից մոբիլիզացված ֆինանսական միջոցները: Ֆինանսավորման պարտադիր պայման է եղել ներկայացվող ծրագրի շարունակականության ապահովումը՝ ինքնաֆինանսավորման, ենթածրագրի զարգացման և ընդլայնման շնորհիվ: Իրականացվել են համայնքների կարիքներին ուղղված ծրագրեր, ինչը նպաստել է ՄՄ կարողությունների զարգացմանը՝ փորձն ու ձեռքբերված գիտելիքները գործնականում կիրառելու միջոցով:

Մարզային մասնաճյուղերի կամավորների կողմից իրականացված ծրագրերն են.

Երեխաների կայուն զարգացում

Դպրոցական երեխաների համար 8 պարապմունքներից բաղկացած ծրագիրը նպաստում է շրջապատում առկա երևույթների մասին կարծիքի ձևավորմանը, դրանց ճիշտ ընկալմանն ու վերարտադրմանը: Ընտրության կարգով ծրագրում ներառվում են շփման դժվարություններ ունեցող և սոցիալապես

ՏԱՐԵԳԻՐ 2020



անապահով ընտանիքի կարգավիճակում գտնվող երեխաներ:

Ծրագիրը նպաստում է երեխաների ընդհանուր զարգացմանը, հաղորդում է նրանց հասակակիցների և մեծահասակների հետ շփվելու հմտություններ, դարձնում է ավելի համարձակ, զարգացնում է հանդուրժողականությունը և խթանում է խնդիրներին կառուցողական մոտեցումներ ցուցաբերելու ընդունակությունը:

Ծրագիրն իրականացվել է Տավուշի՝ Իջևան, Բերդ, Դիլիջան, Գեղարքունիքի՝ Սևան, Սյունիքի՝ Կապան, Գորիս մարզային և համայնքային մասնաճյուղերում: Ծրագրում ընդգրկվել է մոտ 200 աշակերտ: Ծրագրին մասնակցելու հնարավորություն են ունեցել նաև Ղարաբաղյան հակամարտության սրացման հետևանքով 33 մարզեր տեղափոխված երեխաները:

Էկոլոգիական ծրագիր

Տավուշի Դիլիջան համայնքում նախաձեռնվեց և իրականացվեց Էկո աղբ ծրագիրը, ինչի

մասնաճյուղի ակտիվ համագործակցությամբ:

Շնորհիվ ծրագրի և իրականացված կարիքների գնահատման արդյունքների, Բերդի և շրջակա համայնքներից ընդգրկված միայնակ անժառանգ տարեցներ, Ղարաբաղյան հակամարտության սրացման հետևանքով 33 տեղափոխված ընտանիքներ՝ ընդհանուր 7 ընտանիք, ստացել են 2 խորանարդ կուբամետր վառելափայտ: Կամավորների նախաձեռնության և ներգավաժության շնորհիվ իրականացվում են փայտի կտրման, բարձման, տեղափոխման և դասավորման աշխատանքները:

Վարսահարդարման ծառայություններ միայնակ տարեցներին

Ծրագրի շրջանակներում 345Ը կամավորները, որոնք նաև մասնագիտությամբ վարսահարդարներ են, իրականացնում են տնայցեր և մատուցում մազերի հարդարման ծառայություններ միայնակ, անապահով, անժառանգ այն տարեցների շրջանում, ովքեր ի վիճակի չեն տնից դուրս գալու և այցելելու վարսավիրանոց հնարավորություն



շրջանակներում Դիլիջանի 2 դպրոցներում տեղադրվեցին հատուկ աղբարկղեր՝ աղբի տեսակավորման համար: Թափոնի հետագա հավաքումն ու մշակումը իրականացվեց 345Ը կամավորների կողմից՝ դպրոցի աշակերտների ակտիվ ներգրավմամբ:

Վառելափայտի տրամադրում տարեցներին

Դեռևս 2019 թվականից 345Ը Բերդի համայնքային մասնաճյուղում մեկնարկած միայնակ անժառանգ տարեցներին ձմռան ամիսներին վառելափայտի տրամադրման կամավորական նախաձեռնությունը շարունակվում է, որն իրականացվել և իրականացվում է Բերդի համայնքապետարանի և «Հայաստան» ՊՈԱԿ «Արժվաբերողի անտառտնտեսություն»

չունեն: Այս ծրագիրն իրականացվել է Տավուշի Բերդ և Սյունիքի Կապան ու Գորիս համայնքներում: Ծրագրում ընդգրկվել է 7 կամավոր, ծառայությունից օգտվել է 115 շահառու:

Արհեստագործական հմտությունների ուսուցանում խոցելի խմբերին

Գեղարքունիքի Սևան և Վարդենիս համայնքներում և Վայոց Ձորի Եղեգնաձոր համայնքում սոցիալապես խոցելի ընտանիքների կանանց և երեխաների համար իրականացվել են արհեստագործական հմտությունների ուսուցման՝ կարունձևի և ապակիների նկարազարդման դասընթացներից բաղկացած մի շարք ծրագրեր: Ծրագրի շահառուներին տրամադրվել են

գործիքներ և նյութեր: Ծրագրից օգտվել է 40 երեխա և 24 կին:

Արարատի, Արագածոտնի, Կոտայքի և Տավուշի մարզային մասնաճյուղերի կարողությունների զարգացում՝ կարիքի վրա հիմնված ծրագրերի միջոցով

Շվեյցարական Կես կողմից ֆինանսավորված մարզային մասնաճյուղերի զարգացման ծրագրերի շրջանակներում, բարելավվել են մասնաճյուղերի կարիքների գնահատման, ինդիկատորներին արձագանքման և ծրագրերի կառավարման կարողությունները: Ծրագրի շրջանակներում շարունակվել է Արարատի մարզի Մասիս քաղաքում բարեգործական ճաշարանի գործարկումը՝ շաբաթական 3 անգամ տաք ճաշ տրամադրելով 70 միայնակ տարեցների: Իսկ մյուս մարզերում ամեն ամիս սննդի փաթեթներ են տրամադրվել 210 խոցելի տարեցների և ամեն եռամսյակ տրամադրվել են հիգիենիկ փաթեթներ: Ծրագրի հաջողություններից է նաև մարզերում տեղական ռեսուրսների՝ բիզնես



հատվածի մոբիլիզացումը: Նաև արդյունավետ համագործակցություն է հիմնվել բոլոր մարզերի ՏԻՄ-երի հետ: Հասկանալի է Հրազդանի քաղաքապետարանի, Արարատի մարզի մի շարք համայնքների՝ այդ թվում Մասիսի քաղաքապետարանի և Տավուշի մարզի մի շարք համայնքների՝ այդ թվում Իջևանի քաղաքապետարանի կողմից ստացված աջակցությունը: Ծրագրի կարևոր բաղադրիչներից էր նաև ՄՄ կարողությունների զարգացումը՝ ինչը իրականացվել է և դասընթացների, և գործնական աշխատանքների շնորհիվ: Մասնավորապես բարելավվել են կարիքների գնահատման և ծրագրերի իրականացման կարողությունները:



Ինստիտուցիոնալ զարգացում

Բոլոր մարզային մասնաճյուղերում իրականացվել են նյութական և մարդկային կարողությունների հզորացման միջոցառումներ: Պարբերաբար կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ կամավորների համար՝ այդ թվում Առաջին օգնություն, Արտակարգ իրավիճակների արձագանքում, Ընտանեկան կապերի վերամիավորում, Երեխաների կայուն զարգացման ծրագրի վարում, շահառուների հետ աշխատելու հոգեբանական առանձնահատկություններ, ծրագրի պլանավորում և ֆոնդահայթայթում, կամավորների կառավարում, Կես սկզբունքների և արժեքների տարածում և այլ թեմաներով: ԿեսՄՖ-ի հետ համագործակցությամբ՝ իրականացվեց դժբախտ պատահարներից 500 կամավորների ապահովագրում, ինչպես նաև աշխատակազմն ու բոլոր կամավորները ապահովագրվեցին ԶՈՎԻԴ-19 վարակի դեպքերից:

Դեկտեմբերի 10-11-ը Երևանում կազմակերպվեց ամփոփիչ համաժողով՝ բոլոր Մարզային մասնաճյուղերի ղեկավար կազմի, աշխատակիցների և կամավորների համար: Համաժողովի ընթացքում ամփոփվեց անցնող տարվա գործունեությունը, նվաճումներն ու մարտահրավերները:

Տարեվերջին, կամավորների միջազգային օրվան նվիրված միջոցառումներ կազմակերպվեցին բոլոր մարզերում. ամփոփվեց կամավորական տարին և սկստիվ կամավորները խրախուսվեցին:

Տարվա ավարտին մեկնարկեցին նաև կազմակերպության զարգացման եռամյա պլանի մշակման աշխատանքները՝ ինչի շնորհիվ ՀԿԽԸ մարզային մասնաճյուղերում ներդրվելու է կայուն զարգացման գործնաթուղի:



ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՄՈՒԼԻԶԱՑՈՒՄ



2020 թվականին Հայկական Կարմի խաչի ընկերությունը շարունակել է Ռեսուրսների հայթայթման գործընթացը՝ միևնույն ժամանակ աշխատելով այս ուղղությամբ կազմակերպության կարողությունների զարգացման վրա:

Զովիդ-19 համավարակի օրերին, խոցելի խմբերին աջակցելու համար ՀԿԽԸ-ն ձեռնամուխ եղավ միջազգային և տեղական ռեսուրսների մոբիլիզացման աշխատանքներին:

Միջազգային գործընկերների կողմից, այդ թվում՝ Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի, Կարմիր խաչի միջազգային կոմիտեի, Դանիական, Շվեյցարական, Ավստրիական եւ Գերմանական Կարմիր խաչերի, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության, Եվրամիության, HSBC Հայաստանի, «Իզմիրլյան» հիմնադրամի, Ավստրիայի զարգացման գործակալության, Շվեյցարիայի զարգացման գործակալության եւ ՊեպսիԿո ընկերության, Հայկական Կարմիր խաչի

ընկերության Զովիդ-19-ի արձագանքի համար մոբիլիզացվել է 1 356 851 476 ՀՀ դրամ:

Տեղական ընկերություններից ֆինանսական եւ բնահիրային աջակցություն են տրամադրել «Իմ Զայլը» հիմնադրամը, «Միլբո» (ՓԲԸ), «Սեվանի իշխան» (ՓԲԸ), «Սոնանուշ» (ՍՊԸ), «Գրին ֆարմեր» (ՍՊԸ), «Էկո ֆրեշ մաշրուս» (ՍՊԸ), «Ինգո Արմենիա» (ՍՊԸ), «Ազոո թեյեր» (ՍՊԸ), «Գոլդեն բեյբի», «Ռոյալ - Արմենիա», «Սմոգսոյիդ» ՍՊԸ. «Իքս» Գրուպ, Բայազեդ (ՍՊԸ), «Ռեֆրու» (ՍՊԸ), Արաքս թռչնաֆաբրիկա, Ջիեյթի Զայթինգ աուտդորս ընկերություն, Հայ Էլեկտրական ցանցեր կազմակերպությունները:

ՀԿԽԸ և ԿԽՄՖ համատեղ ջանքերով իրականացվել է հետազոտություն՝ անսահմանափակ անուղորդված եկամտի ստեղծման վերաբերյալ:

Հետազոտության արդյունքների հիման վրա ձեռնարկվել են որոշակի քայլեր համացանցային հանգանակության լավագույն ձևերը

